ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ 2011-2013 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

1. Ցկյանս ուսումնառության ծրագրի ընդհանուր և առանձնահատուկ նպատակները 5

2. Ընդհանուր քաղաքականության դրույթներ 6

3. Ընդհանուր գերակայություններ 8

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 10

5. Ինչպես օգտվել այս փաստաթղթից 11

ԳԼՈՒԽ 1 – ՍԵԿՏՈՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 12

1. Կոմենիուս – Դպրոցական կրթություն 12

1.2 Բազմակողմանի ծրագրեր 15

1.2.1 Դպրոցական զարգացում, առաջնորդություն և գործարար աշխարհի հետ կապեր 15

1.2.2 Դասավանդման և ուսուցման մոտեցումների զարգացում 16

1.2.3 Գրագիտության և առանցքային հմտությունների օժանդակություն 16

1.2.4 Դպրոցից վաղաժամ հեռացման կրճատում, միգրանտ ուսանողների ուսուցման բարելավում, գենդերային հավասարության և ուսուցման ներառական մոտեցումների առաջխաղացում 17

1.3 Ցանցային աշխատանքներ 18

1.3.1 Ձեռներեցության աջակցություն և կապեր գործարար աշխարհի հետ 18

1.3.2 Գիտական կրթությունն ավելի գրավիչ դարձնելու աջակցություն 18

1.3.3 Նախադպրոցական և վաղ մանկության կրթության ու խնամքի (ECEC) զարգացման ապահովում 19

1.3.4 Հատուկ կարիքավորների կրթության զարգացում՝ ներգրավելով բոլոր երիտասարդ մարդկանց, հատկապես՝ հաշմանդամներին 19

2. Էրասմուս. Բարձրագույն կրթություն, այդ թվում ՝ Ընդլայնված մասնագիտական կրթություն և ուսուցում....19
2.1 Շարժականություն....22
2.2.3 Շարժականության ռազմավարություններ և բարձրագույն կրթության մեջ շարժականության խոչընդոտների վերացում....25
2.2.4 Բուհերի օրակարգի արդիականացման աջակցություն....25
2.2.5 Բարձրագույն կրթության մեջ բարձր առաջադիմության և նորարարարությունների խթանում....26
2.3 Ակադեմիական ցանցային աշխատանքներ....27
3.1 Շարժականություն և համագործակցություններ....30
3.2 Բազմակողմանի նախագծեր – Նորարարությունների փոխանցում....30
3.2.1 ՄԿՈ և գործարար աշխարհի հետ համագործակցության խթանում....31
3.2.2 ՄԿՈ ուսուցիչների, դասընթացավարների, կրկնուսույցների և ՄԿՈ հաստատությունների ղեկավարների նախնական և շարունակական ուսուցման աջակցություն....32
3.2.3 ՄԿՈ հիմնական կարողությունների ձեռքբերման խթանում....32
3.2.4 ՄԿՈ շարժականության ռազմավարությունների զարգացում և....33
3.2.5 ՄԿՈ ԵԿ ուսման արդյունքների և որակավորումների թափանցիկության և ճանաչման համար....34
3.2.6 Որակի ապահովման համակարգերի բարելավում ՄԿՈ-ում....34
3.3 Բազմակողմանի նախագծեր –Նորարարության զարգացում....35
3.3.1 ՄԿՈ-ԵԿ կիրառումը ուսման արդյունքների և որակավորումների թափանցիկության և ճանաչման համար....35
3.3.2 ՄԿՈ որակի ապահովման համակարգերի բարելավում....36
3.3.3 Մասնագիտական հմտությունների զարգացում՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները – Նոր հմտություններ նոր աշխատանքների համար....37
3.4 Ցանցային աշխատանքներ....37
3.4.1Համագործակցություն ՄԿՈ և գործարար աշխարհի միջև....37
3.4.2 ՄԿՈ շարժականության ռազմավարությունների մշակում....38
4. Գրունդտվիգ –Մեծահասակների կրթություն....38
4.1 Շարժականություն և համագործակցություններ....40
4.2 Բազմակողմանի նախագծեր....41

4.2.1 Մեծահասակների կրթության միջոցով առանցքային հմտությունների ձեռքբերում.41
4.2.2 Մեծահասակների կրթության դերը սոցիալական ներգրավվածության և գենդերային հավասարության ամրապնդման մեջ 42
4.2.3 Միջսերնդային կրթություն: Ուսուցում տարեցների համար: Ընտանեկան ուսուցում 42
4.2.4 Մեծահասակների կրթության որակի ապահովում, ներառյալ անձնակազմի մասնագիտական զարգացումը....43
4.3 Ցանցային աշխատանքներ....44
4.3.1 Սոցիալական համախմբվածության խթանում սոցիալական հատուկ խմբերի մեծահասակներին որակյալ կրթության հնարավորություն տալու միջոցով 44
ԳԼՈՒԽ 2 – ԲԱԶՄԱՃՅՈՒՂ ԾՐԱԳՐԵՐ....44
1. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ –Համագործակցության քաղաքականություն և նորարարություն 45
1.2 Ուսումնասիրություններ և համեմատական հետազոտություն....46
1.2.1 Մեծահասակների կրթության ապահովում և պահանջարկ 47
1.2.2 Ցկյանս ուսումնառության ընթացքում կրթության և ուսուցման առանցքային հմտությունների ձեռքբերում....47
1.2.3 Սոցիալական ներգրավվածությունը կրթության և ուսուցման մեջ, ներառայալ միգրանտների ինտեգրումը 47
1.2.4 Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈ) գրավչությունը 48
1.2.5 Լիազորությունների չափում և հետագա հմտությունների ապահովում 48
1.3 Ցանցային աշխատանքներ....48
1.3.1 Ցկյանս ուսումնառության ռազմավարությունների առաջխաղացում՝ ներառյալ կրթության ու ուսուցման տարբեր ոլորտների միջև ուղիները....48
2. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ – ԼԵԶՈՒՆԵՐ 49
2.1 Բազմակողմանի ծրագրեր....50
2.1.1 Համագործակցություն կրթության, ուսուցման և գործարար աշխարհի միջև....50
2.1.2 Քիչ գործածվող եվրոպական լեզուների տիրապետման խթանում և ամրապնդում .50
2.1.3 Կրթության և ուսուցման համակարգերի միջոցով առանցքային հմտությունների ձեռքբերման խթանում....50
2.1.4 Կրթության մեջ սոցիալական ներգրավվածության և գենդերային հավասարության ամրապնդում՝ ներառյալ միգրանտների ինտեգրումը....51

2.1.5 Հարևան երկրների լեզուների ուսուցման խթանում 51

2.2 Ցանցային աշխատանքներ 51

2.2.1 Կրթության մեջ սոցիալական ներգրավվածության և գենդերային հավասարության ամրապնդում՝ ներառյալ միգրանտների ինտեգրումը 51

2.2.2 Ուսուցում և համագործակցություն գրական թարգմանության ոլորտում 52

2.2.3 Եվրոպական լեզուների ապրանքանիշի ծրագրերի արդյունքների տարածում և նրանց միջև ցանցային աշխատանքների խթանում 52

2.2.4 Հարևան երկրների լեզուների ուսուցման խթանում 52

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ – Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ՝ ՏՀՏ 52

3.1 Բազմակողմանի ծրագրեր 53

3.1.1 Բազմաճյուղ հմտությունների ամրապնդում, ինպիսիք են թվային հմտությունները, որոնք կապում են կրթական ու աշխատանքային ոլորտները 53

3.1.2 Նորարարական մանկավարժություն և ուսուցման բազմակողմանի ուղիների գնահատման մեթոդներ 54

3.2 Ցանցային աշխատանքներ 55

3.2.1 Եվրոպայի շահառուների համայնքների կողմից թվային հմտությունների և աշխատունակության ու կյանքի համար կարևոր այլ կարողությունների խթանում 55

3.2.2 Համաեվրոպական շահառուների համայնքները պայքարում են սոցիալ-տնտեսական թվային բաժանման դեմ 55

4. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ – Արդյունքների տարածում և օգտագործում 56

4.1 Բազմակողմանի նախագծեր 57

4.1.1 Արդյունքների արդյունավետ տարածման և օգտագործման խաչընդոտների ուսումնասիրում և բացահայտում: Դրանց համար կայուն մոդելների մշակում 57

4.1.2 Արդյունքների տարածման ու շահագործման գործողությունների ազդեցությունը ..57

4.1.3 Արդյունքների փոխանցում և օգտագործում (բազմացում) և դասակարգում ըստ սկզբունքների 57

ԳԼՈՒԽ 3 – ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳԻՐ 58

1. Դասավանդման նախագծեր (Ժան Մոնե մոդուլներ, Ժան Մոնե ամբիոններ և Ժան Մոնե անհատական ամբիոններ) 58

2. Ակադեմիական և հետազոտական այլ նախագծեր (Ժան Մոնե Բարձր առաջադիմության կենտրոններ, Տեղեկատվական և հետազոտական գործունեություն, Բազմակողմանի հետազոտական խմբեր) 59

Ներածություն

1. ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ցկյանս ուսումնառության ծրագրի նպատակները սահմանված են Եվրոպական Պառլամենտի No 1720/2006/EC Հոդված 1-ում և 2006թ նոյեմբերի 6-ին ստեղծված ցկյանս ուսումնառության ոլորտի[1] գործողությունների ծրագրում (այսուհետ՝ «ծրագրի որոշում»): Դրանք համապատասխանում են ծրագրի բոլոր մասերին և յուրաքանչյուր ենթածրագիր համալրված է հատուկ ու գործառնական նպատակներով (տես այս առաջարկների հրատարակության համապատասխան գլուխը):

Ինչպես սահմանված է ծրագրի որոշման Հոդված 1.2-ում, ծրագրի հիմնական նպատակը հետևյալն է՝ ցկյանս ուսումնառության միջոցով նպաստել Եվրոպական Միության զարգացմանը՝ որպես առաջադեմ կրթված հասարակության, տնտեսական կայուն զարգացմամբ, ավելի շատ ու լավ աշխատանքներով ու առավել ընդլայնված սոցիալական համախմբվածությամբ, և որն ապահովում է ապագա սերունդների համար շրջակա միջավայրի պաշտպանվածություն:
Մասնավորապես ծրագիրը նպատակ ունի խթանել Եվրոպական Միության մեջ կրթական ու ուսուցման համակարգերի միջև փորձի փոխանակումը, համագործակցությունն ու շարժունակությունը այնպես, որ դրանք որակի միջազգային չափանիշ դառնան:

Ծրագրի առանձնահատուկ նպատակները, ինչպես սահմանված են ծրագրի որոշման Հոդված 1.3-ում, հետևյալն են
(ա) նպաստել որակյալ ցկյանս ուսումնառության զարգացմանը, խթանել բարձր կատարողականությունն և նորարարությունները ոլորտում և եվրոպական համակարգերն ու փորձը

[1] Եվրոպական Պառլամենտի ու Խորհրդի որոշում համար 1720/2006/EC, 15 նոյեմբեր 2006թ, որում սահմանված է ցկյանս ուսումնառության ոլորտում գործողությունների ծրագիրը http://eur-lex.europa.eu/lex/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2006:327:0045:0068:EN:PDF

(բ) աջակցել, որպեսզի Եվրոպան դառնա ցկյանս ուսումնառության համար հարմար տարածք
(գ) օգնել բարելավել ցկյանս ուսումնառության հնարավորությունների որակը, գրավչությունն ու մատչելիությունը Անդամ երկրների համար
(դ) ամրապնդել ցկյանս ուսումնառության ներդրումը սոցիալական համախմբվածության, ակտիվ քաղաքացիության, միջմշակութային երկխոսության, գենդերային հավասարության և անձնական զարգացման ոլորտներում
(ե) օգնել խթանելու ստեղծարարությունը, մրցունակությունը, աշխատունակությունը և ձեռնարկատիրական ոգու աճը
(զ) նպաստել բոլոր տարիքային խմբերի մարդկանց մասնակցությանը ցկյանս ուսումնառության ծրագրին, ներառյալ հատուկ կարիքներով և հաշմանդամ մարդկանց խմբերը՝ անկախ նրանց սոցիալ-տնտեսական վիճակից
(է) օժանդակել լեզուների ուսուցմանը և լեզվական բազմազանությանը
(ը) աջակցել նորարար տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների՝ ՏՀՏ-ի վրա հիմնված միջոցներին, ծառայություններին, մանկավարժությանը և ցկյանս ուսումնառության գործելակերպին
(թ) ամրապնդել ցկյանս ուսումնառության դերը ժողավրդավարության ու մարդու իրավունքների հանդեպ հարգանքի վրա հիմնված Եվրոպական քաղաքացիության զգացում ստեղծելու հարցում և խրախուսել այլ մարդկանց ու մշակույթների հանդեպ հանդուրժողականությունն ու հարգանքը:
(ժ) Եվրոպայի կրթության ու ուսուցման բոլոր ոլորտներում խթանել որակի ապահովման համագործակցությունը
(ի) խրախուսել արդյունքների և գործընթացների լավագույն կիրառումը, փոխանակել Ցկյանս ուսումնառության ծրագրում ընդգրկված ոլորտների օգտակար փորձը՝ կրթության ու ուսուցման որակի բարելավման նպատակով

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ցկյանս ուսումնառության ծրագրի (ՑՈՒԾ) առաջնահերթ նպատակը ԵՄ 2020[2] Ռազմավարությունում սահմանված նպատակներում կրթության և ուսուցման

[2] Եվրոպայի հանձնաժողով 2020 – Ռազմավարություն խելացի, կայուն ու ընդգրկուն աճի համար. COM(2010) 2020: http://ec.europa.eu/eu2020/pdf/COMPLET%20EN%20BARROSO%20%20%20007%20-%20Europe%202020%20-%20EN%20version.pdf և Եվրոպայի Խորհրդի 25/26 մարտ 2010թ, EUCO 7/10: Եզրակացություններ, I.Եվրոպա 2020: Աճի ու աշխատանքի եվրոպական նոր ռազմավարություն: http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/ec/113591.pdf

ներդրման ամրապնդումն է՝ կենտրոնանալով գիտելիքների աճի վրա, ապահովելով մարդկանց ցկյանս ուսունառության որակավորումների բարձրացման մատչելիությունը՝ «Նոր Հմտություններին նոր աշխատանքների համար»”[3] տիրապատելու նպատակով: Ավելի հստակ, ՑՈՒԾ-ը աջակցում է կրթության ու ուսուցման ոլորտում եվրոպական քաղաքականության իրականացմանը, ինչպես սահմանված է կրթության ու ուսուցման եվրոպական համագործակցության ռազմավարական շրջանակներում ET 2020[4]:

Համակարգման բաց մեթոդների միջոցով Անդամ երկրների նպատակն է

Իրականություն դարձնել ցկյանս ուսումնառությունն ու շարժականությունը՝ իրականացնելով ցկյանս ուսումնառության ռազմավարությունները, զարգացնելով որակավորման շրջանակները և չափորոշիչները՝ կրթության ավելի ճկուն ուղիներ ստեղծելու համար, խթանել Եվրոպայի բոլոր սովորողների, ուսուցիչների ու դասավանդողների ուսուցման շարժականությունը[5], ներառյալ «Երիտասարդությունը շարժման մեջ» ("Youth on the Move") նախաձեռնությունը:

Բարելավել կրթության և ուսուցման որակն ու արդյունավետությունը՝ հնարավորություն տալով բոլոր սովորողներին ձեռք բերել իրանց աշխատունակության համար անհրաժեշտ հիմնական հմտություններն ու ունակությունները, այդ թվում՝«Նոր Հմտություններ Նոր աշխատանքների համար» նախաձեռնության միջոցով: Ապահովել որակյալ դասավանդում և դասավանդողների ուսուցում և ավելացնել կրթության ու ուսուցման բոլոր մակարդակների գրավչությունը:

Խթանել անաչառությանը, սոցիալական համախմբվածությանը և ակտիվ քաղաքացիությանը բարձրորակ տարրական կրթության թերությունները ուղղելով ավելի նպատակային և ներառական կրթությանը

ավելացնել ստեղծագործական միտքը և նորարարությունները կրթության ու ուսուցման բոլոր մակարդակներում՝ խթանելով առանցքային հմտությունների ձեռքբերումը և համագործակցություններ հաստատելով ավելի լայն հարթակներում՝ մասնավորապես բիզնեսում, դարձնել կրթական ու ուսուցման հաստատություններն ավելի բաց և աշխատանքային շուկային ու հասարակությանը համապատասխան[6]:

---

[3] Եվրախորհրդարանի, տարածքների տնտեսագիտական և սոցիալական եվրոպական կոմիտեի հայտարարագիր՝ Նոր հմտություններ նոր աշխատանքների համար, աշխատաշուկայի հմտությունների կարիքների համապատասխանեցում: COM(2008) 868 final: http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2008:0868:FIN:EN:PDF

[4] http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc1120_en.htm

[5] http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc1292_en.htm

[6] Խորհրդի եզրակացություն 12 Մայիս 2009թ կրթության ու ուսուցման եվրոպական համագործակցության ռազմավարության մասին (‘ET 2020’), (2009/C119/02): http://eurlex.

Այս թեմային վերաբերող փաստաթղթերի ամբողջական փաթեթը հրապարակված է DG EAC կայքում[7]:
Դպրոցական կրթության, բարձրագույն կրթության, մասնագիտական ուսուցման և մեծահասկաների ուսուցման մասին հատուկ քաղաքականությունը ներկայացված է սեկտորային ծրագրերի գլուխներում:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերը նշված ռազմավարական քաղաքականության վրա հիմնվելով սահմանված են առաջարկությունների հայտերի հետևյալ ընդհանուր գերակայությունները:

1. Զարգացնել ռազմավարություն ցկյանս ուսումնառության և շարժականության համար

Այս գերակայությունը Խորհուրդի երիտասարդների շարժականության մասին որոշման[8], երիտասարդների ուսուցման շարժականության[9] և «Երիտասարդությունը շարժման մեջ» նախաձեռնության հետ ներկայացվել է Նախագահ Բարոսոյի Եվրապառլամենտի 2009թ-ի սեպտեմբերի քաղաքական ուղեցույցում և հաստատվել 2010թ Մարտի 3-ին Հանձնաժողովի Եվրոպա 2020 քազմավարության[10] ընթացքում: Այստեղ «Երիտասարդությունը շարժման մեջ» նախաձեռնությունը ճանաչվել է ամենակարևորներից մեկը:
Ուսուցման շարժականության աճը խթանելու համար գերակայությունը խրախուսում է նախաձեռնությունները, որոնք կզարգացնեն շարժականության ռազմավարությունները և կվերացնենւ դրա խոչընդոտները[11]:
Այս համատեքստում հատկապես կխրախուսվեն Անդամ երկրների միջև նախաձեռնությունները: Շարժականության ռազմավարությունները կարող են զարգանալ նաև սեկտորային մակարդակում (օր.՝արդյունաբերական ոլորտ) կամ կրթական հաստատությունների միջև:
Անցումը դեպի ուսման արդյունքներ, ցկյանս ուսումնառության արդյունավետ ուղեցույցներ և ցկյանս ուսումնառությունն ու շարժականությունը բարելավող EQF և

europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2009:119:0002:0010:EN:PDF
[7] http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc36_en.htm

[8] Խորհրդի և Անդամ երկրների կառավարությունների ներկայացուցիչների եզրակացություն, Երիտասարդների շարժականության վերաբերյալ Խորհրդի հանդիպում 21 նոյեմբեր 2008թ (2008/C 320/03): http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2008:320:0006:0009:EN:PDF
[9] COM(2009) 329 final: http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc/mobility/com329_en.pdf
[10] Ibid 2
[11] http://ec.europa.eu/education/news/news2540_en.htm

NQFs, Europass և ՄԿՈՒԵԿ գործիքների իրականացումը նույնպես պետք է ուսումնասիրվեն ծրագրերում:

2. Խրախուսել կրթության, աշխատանքի և ուսուցման միջև համագործակցությունը

Համաձայն 2009թ համալսարանների/բիզնես համագործակցության մասին Հաղորդագրության[12], ծրագրի նպատակն է խրախուսել կրթության, ուսուցման և աշխատանքի բոլոր ոլորտների միջև համագործակցությունը: Սոցիալական գործընկերների՝ կրթությունը և ուսուցումը աշխատանքի համար ավելի համապատասխան դարձնելու հարցում ներդրումը շատ կարևոր է աշխատաշուկայի, մարդկանց աշխատունակության և ձեռնարկատիրական ներուժի համար: Կրթության ու աշխատանքի ոլորտների համագործակցությունը կարող է նպաստել նաև ուսուցման ու կարիերայի ուղղորդման բարելավմանը:

3. Աջակցել ուսուցիչների, դասընթացավարների, կրթական ու ուսումնական հաստատությունների ղեկավարների նախնական և շարունակական ուսուցմանը

Ինչպես ներկայացված է 2009թ սեպտեմբերի նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը, մեծ կապ կա կրթության, ուսուցիչների և կրթական հաստատությունների ղեկավարների որակների միջև: 2009թ նոյեմբերին Խորհրդի Եզրակացության համաձայն[13] հանձնաժողովի խնդիրն է աջակցել առնչվող ոլորտներում համագործակցությանը ու փորձի փոխանակմանը: Որակի ապահովման մեխանիզմները կրթության և ուսուցման բոլոր մակարդակներում ամրապնդում են այս զարգացումները:

4. Խթանել առանցքային հմտությունների ձեռքբերումը կրթության ու ուսուցման համակարգերում

Ինչպես նշված է 2010թ կրթության ու ուսուցման վերաբերյալ համատեղ զեկույցում, երբ առանցքային հմտությունների իրականացումն ավելի զարգացած է ընդհանոր դպրոցական կրթության մակարդակում, մասնագիտական կրթության ու ուսուցման, բարձրագույն և մեծահասակների կրթության ոլորտներում բարեփոխումների իրականացումը պակաս արդյունավետ է եղել: Այս գերակայության նպատակն է խրախուսել բոլոր ոլորտները՝ սկսած վաղ մանկության կրթությունից, մշակել

[12] Զեկուցում Երոպական Խորհրդարանի Հանձնաժողովից, Խորհուրդ, Եվրոպական Տնտեսական ու ոցիալական հանձնաժողով և Շրջանների հանձնաժողով: Համալսարանների արդիականացման նոր համագործակցություն: Համալսարանների Բիզնես Երկխոսության ԵՄ ֆորում, COM(2009) 158 final: http://eurlex. europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2009:0158:FIN:EN:PDF

[13] Խորհրդի եզրակացություն ուսուցիչների և դպրոցի ղեկավարների մասնագիտական զարգացման մասին 26 նոյեմբեր 2009 (2009/C 302/04): http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2009:302:0006:0009:EN:PDF

նախագծեր՝ կենտրոնացած հետևյալ առանցքային հմտությունների վրա, յուրաքանչյուրն ըստ իր առանձնահատկությունների.
1. Հաղորդակցություն մայրենի լեզվով
2. Հաղորդակցություն օտար լեզվով
3. Մաթեմատիկական հմտություններ և հիմնական հմտություններ գիտության և տեխնոլոգիայի ոլորտներում
4. Թվային հմտություններ
5. Սովորել սովորելու համար
6. Սոցիալական ու քաղաքացիական կարողություններ
7. Նախաձեռնության ու ձեռներեցության զգացում
8. Մշակութային իրազեկություն և արտահայտում
Այս համատեքստում բազմալեզվությունը հատկապես կխրախուսվի

5. Օժանդակել սոցիալական ներգրավվածությունն ու գենդերային հավասարությունը կրթության ու ուսուցման ոլորտներում, ներառյալ գաղթականների ինտեգրումը

Հետևելովաղքատության դեմ պայքարի եվրոպական տարվան (2010), նախագծեր կստեղծվեն օժանդակելու համար սոցիալական ներգրավվածությունը կրթության միջոցով: Դպրոցական սեկտորի համար դպրոցից վաղաժամ հեռանալու և հատուկ կարիքների խնդիրները հատկապես կկարևորվեն: Բարձրագույն կրթության համար ուշադրության կենտրոնում կլինի սովորողների համար մատչելիության ապահովման ընդլայնումը: Գաղթականների մասնակցությանը, անապահով խմբերին և հատուկ կարիքներով մարդկանց խոցելի սոցիալական խմբերին վերաբերող հարցերը հատկապես կկարևորվեն դպրոցական, մասնագիտական կրթության և ուսուցման, մեծահասակների կրթության համար: Սովորողների այս խմբերի համար համապատասխան ուղղորդության մատչելիությունը հատկապես կարևոր է: Գենդերային բաժանումը շատ ակնհայտ է կրթության մեջ. դպրոցից վաղաժամ հեռացումը ավելի բացասական է անդրադառնում հատկապես տղաների վրա, քան աղջիկների: Առարկաների ընտրության հարցում էլ սեռային պատկանելիությունը մեծ դեր է խաղում: Չնայած գենդերային բաժանումը առնչվում է ծրագրին ամբողջապես, այն հատկապես վերաբերում են գերակա նախագծերին:

Բացի այդ հարկ է նշել, որ հաշմանդամ մարդկանց ուսուցման հնարավորությունների խթանումը ծրագրի ռազմավարական գերակայություններից է:
Այս բոլոր ռազմավարական գերակայություններն արտացոլված են տարբեր ենթածրագրերում, որոնց աջակցում է Ցկյանս ուսումնառության ծրագիրը: Անհրաժեշտության դեպքում հավելյալ գերակայություններ են ներկայացված յուրաքանչյուր ենթանախագծի համար:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Համաձայն ծրագրի որոշման հոդված 14 (2)-ի, Կոմենիուսի, Էրասմուսի, Լեոնարդո դա Վինչի, Գրունդտվիգ և Բազմաճյուղ Ծրագրի առանցքային հմտությունների, բազմակողմանի ծրագրերը ու ցանցերը նույնպես բաց են երրորդ երկրների գործընկերների համար, որոնք ըստ ծրագրի որոշման Հոդված 7-ի չեն մասնակցում Ցկյանս Ուսումնառության Ծրագրին: Մասնակցության մանրամասների համար խնդրում ենք նայել ՑՈՒԾ ուղեցույցը:

Ուղեկցեղ միջոցները խրախուսվում են բոլոր ոլորտների ծրագրերում և Հիմնական գործառույթ 2-ում (Լեզուներ):
Բոլոր ծրագրերում հատուկ ուշադրություն է դարձվում նախագծերի, ծրագրերի քաղաքականության արդյունքների համակարգված տարածման ու օգտագործման վրա: Նախագծի բոլոր հայտերը պետք է պարունակեն արդյունքների տարածման ու օգտագործման հստակ ծրագիր:
Հանձնաժողովը կքննարկի նախորդ տարիներին արդեն ֆինանսավորված և իրենց արդարացրած ծրագրերի նոր հայտերի համաֆինանսավրումը:

5. ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Այս փաստաթղթում ներկայացված են Ցկյանս Ուսուցման Ծրագրին հրավիրված հայտերի գործողությունների տարբեր տեսակները, ինչպես նաև համապատասխան քաղաքականության գերակայությունները:

Այս փաստաթղթում ներկայացված գերակայություններն այն հարցերն են, որոնք կենտրոնական տեղ են զբաղեցնում եվրոպական մակարդակով կրթության և ուսուցման քաղականության զարգացման համար: Հայտերը պետք է ուղղված լինեն այս գերակայություններից առնվազն մեկին, որպեսզի ընտրվեն:
Եթե ներկայացվեն հավասար որակ ունեցող առաջարկներ, ապա ֆինանսավորման համար առավել մեծ հնարավորություն կունենան այն առաջարկները, որոնք սևեռված են նշված գերակայությունների վրա[14]:

[14] Մանրամասն տեղեկություն հայտերի ընտրության կանոնների վերաբերյալ կհրապարակվեն ՑՈՒԾ Ուղեցույցում – տես:
http://ec.europa.eu/education/lifelong-learning-programme/doc78_en.htm

Ընդհանուր Ժողովի փաստաթուղթը պետք է ուսումնասիրել հետևյալ փաստաթղթերի հետ միասին
–Եվրոպական Խորհրդարանի Ցկյանս Ուսուցման Ծրագիրը հաստատող որոշում 2007- 2013[15]
– Ցկյանս Ուսուցման Ծրագրի Ուղեցույց, որը պարունակում է գործողությունների, ֆինանսական ու վարչական միջոցառումների մանրամասն նկարագրություն[16]:

ԳԼՈՒԽ 1 – ՍԵԿՏՈՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

1. ԿՈՄԵՆԻՈՒՍ – ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Քաղաքականության համատեքստ

2008 նոյեմբերին Խորհուրդը համաձայնեց ընդլայնել եվրոպական համագործակցությունը դպրոցական կրթության քաղաքականության մեջ[17]:
Նպատակն է ապահովել բոլոր երիտասարդներին որակյալ կրթությամբ, որը հնարավորություն է տալիս նրանց գտնել իրենց տեղը գլոբալիզացված հասարակության մեջ, պարբերաբար փոփոխվող աշխատանքային աշխարհում, օգնում է զարգացնել նրանց ներուժը նորարարություններում, ստեղծագործ և ակտիվ քաղաքացիության մեջ:

2007-ին[18] և 2009-ին[19] Խորհուրդը սահմանեց ուսուցիչների և դպրոցի ղեկավարների կրթությունն ու մասնագիտական զարգացումը[20] բարելավելու համագործակցության օրակարգ:

Շեշտը դրվեց որակի և ուսուցիչների կրթության համապատասխանության բարձրացման, նախնական կրթությունից մինչև նոր ուսուցիչների ներգրավման և նրանց մասնագիտական շարունակական զարգացման վրա: 2009-ին Խորհուրդը նաև

[15] Ibid 1
[16] Ibid 14
[17] Խորհրդի և Անդման երկրների կառավարությունների ներկայացուցիչների եզրակացություն, Խորհրդի հանդիպում 21նոյեմբեր 2008 երիտասարդներին 21-րդ դարին պատրաստելու մասին, Դպրեցների մասին Եվրոպական համագործակցության օրակարգ
(2008/C 319/08): http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2008:319:0020:0022:EN:PDF
[18] Խորհրդի և Անդման երկրների կառավարությունների ներկայացուցիչների եզրակացություն, Խորհրդի հանդիպում 15 Նոյեմբերr 2007, ուսուցիչների կրթության որակի բարելավման մասին (2007/C 300/07): http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2007:300:0006:0009:EN:PDF
[19] Ibid 13
[20] http://ec.europa.eu/education/school-education/doc832_en.htm

անդրադարձավ գաղթականների երեխաների կրթությանը և առաջարկեց Անդամ երկրներին նպատակային օգտագործել Ցկյանս Ուսուցման Ծրագիրը, այս խմբին լավագույնս կրթվելու ուղիներին աջակցելու համար[21]:
Այս գերակայությունները ներկայացված են 2009[22] մայիսին ընդունված կրթության ու ուսուցման համագործակցության ռազմավարության նոր ծրագրում (ET2020):
Դպրոցական կրթության համար այս գերակայությունը միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար կարևոր հմտությունների ձեռքբերումը, անկախ ուսանողների անձնական, սոցիալական, տնտեսական վիճակից: Մասնավորապես անհրաժեշտ է գտնել դասավանդման և ուսուցման ընդհանուր հմտությունների բարելավման համար հետագա ուղիներ, որոնք նպաստում են նախաձեռնության, ձեռներեցության, ստեղծարարության, նորորարության և հարմարվողականության զարգացմանը պարբերաբար փոփոխվող աշխատանքային աշխարհում:

Շրջական միջավայրի և միջմշակութային հմտությունների հետ համաձայնեցված կրթությունը նույնպես պետք է բարելավվի:
ET2020 հաստատում է, որ պետք է ջանք գործադրել միգրանտ ուսանողների նպատակային կրթության որակի վրա և գիտակցել վաղ մանկության կրթության և խնամքի կարևոր դերը:

Ինչպես սահմանված է կրթության և ուսուցման համագործակցության նոր ռազմավարական շրջանակի Հավելված I-ում (ET2020), Եվրոպական նոր չափոնիշները[23] բացի գրագիտությունից ներառում են քանակական թիրախներ մաթեմատիկայի և գիտության ոլորտում ցածրորակ գիտելիքներ ունեցող մարդկանց թիվը կրճատելու համար (որպեսզի մինչև 2020թ լինեն ավելի 15%-ից) և որպեսզի մինչև 2020թ դպրոցից վաղաժամ հեռացողների թիվը լինի 10%-ից քիչ:

«Նոր հմտություններ նոր աշխատանքների համար» նախաձեռնության[24] շրջանակներում ապագա հմտությունների մասին վերջին կանխատեսումներով ապագայում կլինեն բարձր կամ միջին որակավորում պահանջվող աշխատանքներ: Սակայն այսպիսի որակավորումները պետք է ուղղեկցվեն կարևոր հմտություններով, որոնք հնարավորություն են տալիս երիտասարդներին աշխատել բազմամշակութային, բազմալեզու և պարբերաբար փոփոխվող պայմաններում, լինել ստեղծագործ ու նախաձեռնող:

Եվրոպական համագործակցությունը, որը խրախուսում է նկարագրված քաղաքականության զարգացումներն ու մարտահրավերները, նպատակ ունի

[21] Խորհրդի եզրակացություն գաղթական անցյալ ունեցող երեխաների կրթության վերաբերյալ 2009/C301/07 : http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2009:301:0005:0008:EN:PDF
[22] Ibid 6
[23] Ibid 6
[24] Ibid 3

Շարունակական աշխատանք տանել ուժեղացնելու համար Ցկյանս ուսումնառության համար անհրաժեշտ առանցքային հմտությունները[25]
Սա ենթադրում է բոլոր ուսանողներին՝ վաղ տարիքից սկսած և անկախ իրենց ծագումից, պայմաններից, սեռից ու հատուկ կարիքներից, հնարավորություն տալ ձեռք բերել առանցքային հմտությունների ամբողջական փաթեթը: Առանցքային հմտությունների զարգացումը պետք է հիմնված լինի ընթերցանության, գրագիտության, հանրահաշվի և գիտությունների հիմնավոր իմացությունների վրա և ներառի և առարկայակենտրոն և ընդհանուր հմտությունները, որոնք դրդապատճառ կհանդիսանան հետագա ուսուցման համար:
Աջակցել դպրոցներին աշխատել գործարար աշխարհի և այլ կարևոր ոլորտների հետ՝ ստեղծելով համագործակցություններ և բարելավելով ուսուցիչների ու աշակերտների ձեռնարկատիրական հմտությունները:
Շարունակել բարելավել ուսուցիչների, դպրոցի ղեկավարների և այլ աշխատակիցների որակը, որպեսզի դպրոցը դառնա արդյունավետ ուսուցման միջավայր: Սա պահանջում է ուսուցիչների որակյալ կրթություն, ավելի արդյունավետ դասավանդողների հավաքագրում և աշխատանք, և դպրոցի ղեկավարներին օգնություն կենտրոնանալ աշակերտների ու ուսուցիչների կրթության բարելավման վրա:

<u>Կոմենիուս ծրագրի հատուկ և գործառնական նպատակները</u>
Կոմենիուս ծրագրի հատուկ նպատակները, ինչպես նշված է Ծրագրի որոշման Հոդված 17.1, հետևյալն են
ա) զարգացնել երիտասարդների և դասավանդող անձնակազմի մոտ եվրոպական մշակույթների ու լեզուների բազմազանության, դրանց արժեքի հասկացությունն ու իմացությունը
բ) օգնել երիտասարդներին ձեռք բերել իրենց անձնական զարգացման, ապագա աշխատունակության ու եվրոպական քաղաքացիության համար անհրաժեշտ հիմնական հմտություններ ու կարողություններ:

Կոմենիուս ծրագրի գործառնական նպատակները, ինչպես նշված են Ծրագրի որոշման Հոդված 17.2-ում, հետևյալն են
ա) բարելավել որակն ու ավելացնել շարժականության ծավալը՝ ներառելով Անդամ երկրների կրթական աշխատակազմը
բ) բարելավել որակն ու ավելացնել համագործակցությունը Անդամ երկրների տարբեր դպրոցների միջև այնպես, որ առնվազն 3 միլիոն աշակերտ ողջ ծրագրի ընթացքում մասնակցի համատեղ կրթական գործողություններին

[25] Եվրոպական Խորհրդարանի ու Խորհրդի Երաշխավորագիր Ցկյանս ուսումնառության ծրագրի առանցքային հմտությունների մասին 18 Դեկտեմբեր 2006 (2006/962/EC): http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2006:394:0010:0018:EN:PDF

գ) խրախուսել ժամանակակից օտար լեզուների ուսուցումը
դ) օժանդակել նորարար ՏՀՏ վրա հիմնված միջոցների, նորարար ծառայությունների, մանկավարժության և ցկյանս ուսումնառության փորձի զարգացմանը
ե) բարձրացնել ուսուցիչների վերապատրաստման եվրոպական ծավալները և որակը
զ) աջակցել մանկավարժական մոտեցումների ու դպրոցի ղեկավարման բարեփոխումներին

1. Կոմենիուս ծրագրի գործողությունների գերակայություններ

1.1 Շարժականություն և համագործակցություն

Կոմենիուսի միջոցով անհատների շարժականությունը եվրոպական մեկ երկրից մյուսը և համագործակցության գործողությունները ներառում են

Անհատ աշակերտների շարժականություն ընթացիկ և արդեն ավարտված դպրոցական համագործակցության շրջանակներում

Ուսուցիչների ու կրթական աշխատակազմի այլ անդամների մասնակցություն վերապատրաստումներին

Նախապատրաստական այցեր դպրոցական համագործակցությունների, ցանցային աշխատանքների և բազմակողմանի ծրագրերի համար

Աջակցություն ապագա ուսուցիչներին

Բազմակողմ և երկկողմ դպրոցական համագործակցություններ, որոնք ներառում են համագործակցության աշակերտների ու աշխատակազմի շարժականություն շրջանակներում

Կոմենիուս Regio Համագործակցություն

eTwinning

Այս գործողությունների համար առանձնահատուկ թեմատիկ առաջնայնություններ չկան: Դրանք սահմանված են ՑՈՒԾ Ուղեցույցում[26]:

1.2 Բազմակողմանի ծրագրեր

1.2.1 Դպրոցական զարգացում, առաջնորդություն և գործարար աշխարհի հետ կապեր

Առանցքային հմտությունների[27] զարգացումը և ուսումը շարունակելու շարժառիթը մեծամասամբ կախված է դասավանդման ու ուսուցման համապատասխանության և դպրոցի՝ արտաքին աշխարհի հետ աշխատանքի ձևից: Դպրոցի առաջնորդության բարելավումը, ուսուցիչների համագործակցության հնարավորությունների ապահովումը և դպրոցների՝ որպես ուսումնական միջավայրի զարգացումը դարձել են առանցքային քաղաքականության դրույթներ:

[26] Ibid 14
[27] http://ec.europa.eu/education/school-education/doc830_en.htm

Նախագծերը պետք է գործընկերներ ներգրավեն թե դպրոցից, և թե արտաքին աշխարհից: Դրանք պետք է զարգացնեն մեթոդներ, ռազմավարություններ, մանկավարժական և այլ նյութեր, որպեսզի կարողանան

ստեղծել համագործակցության ու ցանցային աշխատանքների մոդելներ դպրոցների ու գործարար աշխարհի միջև

զարգացնել առաջնորդական հմտությունները դպրոցի աշխատակազմում

զարգացնել ուսուցիչների հմտությունները միմյանց, աշակերտների ընտանիքների և արտաքին աշխարհի հետ համագործակցության հարցում

խթանել երիտասարդների մոտ նախաձեռնության զգացումն ու զարգացնել ձեռնարկատիրական կարողությունները

1.2.2 Դասավանդման և ուսուցման մոտեցումների զարգացում

Պարբերաբար փոփոխվող գործարար աշխարհի պահանջներին համապատասխանելու համար դպրոցները պետք է երիտասարդների մոտ զարգացնեն առանցքային հմտությունների մի ամբողջ շարք: Սա պահանջում է ուսուցիչների ու դպրոցների ղեկավարների լավ կրթություն և բարձրորակ շարունակական մասնագիտական զարգացում իրենց ողջ կարիերայի ընթացում: Այս համատեքստում մասնագիտության մեջ բոլոր նոր ուսուցիչների ներգրավման ծրագրերը չափազանց կարևոր են:

Նախագծերը պետք է անդրադառնան մերօրյա դպրոցների ղեկավարների համար անհրաժեշտ հմտություններին և մշակեն, փորձարկեն ու իրականացնեն արդյունավետ միջոցներ դպրոցների ղեկավարներին իրենց մասնագիտական զարգացմանը աջակցելու համար,

Նախագծերը պետք է զարգացնեն, փորձարկեն ու իրականացնեն արդյունավետ միջգերատեսչական մոտեցումներ նոր ուսուցիչներին իրենց կարիերայի սկզբում աջակցելու համար:

1.2.3 Գրագիտության և առանցքային հմտությունների օժանդակություն

Գլոբալիզացված գործարար աշխարհը և ժողովրդավարական արժեքների առաջխաղացման պահանջը կոչ են անում զարգացնել գրագիտությունը և այլ հմտություններ՝ ինչպիսիք են սովորելը սովորելու համար, նախաձեռնող ու ձեռներեց լինելու զգացումը, սոցիալական, քաղաքացիական և մշակութային կարողությունները: Այս կարողությունների ուսուցումն ու դասավանդումը հաճախ պահանջում են մոտեցումներ, որոնք դուրս են գալիս առարկայի սահմաններից և ամբողջական պատկերացում են կազմում սովորողների ուսուցման, անձնային ու սոցիալական զարգացման մասին:

Փորձը ցույց է տալիս, որ ուսուցման գնահատման ուղիները մեծ ազդեցություն ունեն ուսման արդյունքների որակի վրա: Առանցքային հմտությունների ձեռքբերումը

ներառում է նաև Եվրոպայի բազմամշակույթ և բազմալեզու բնույթը հասկանալը, և թե ինչպես են ազգային մշակութային ինքնությունները փոխազդում եվրոպականի հետ:

Նախագծերը պետք է

- հստակեցնել և մշակել դասավանդման և ուսուցման մեթոդներ, որոնք արդյունավետորեն աջակցում են ուսանողների ուսան որակի զարգացմանը, ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբակային սովորողների համար
- գտնել գրագիտությունը ամրապնդելու ուղիներ, կազմակերպել ընթերցանության դժվարությունների արդյունավետ ճանաչում և օգնել նման դժվարություններ ունեցողներին դպրոցական ողջ համակարգի ընթացքում
- զարգացնել գնահատման մեթոդները և փորձը, որոնք կբարելավեն ուսուցման որակը և կաջակցեն բոլոր առանցքային կարողությունների զարգացմանը
- հստակեցնել և զարգացնել դասավանդման ու ուսուցման ներգրավումը եվրոպական հարթություն:

1.2.4 Դպրոցից վաղաժամ հեռացման կրճատում, միգրանտ ուսանողների ուսուցման բարելավում, գենդերային հավասարության և ուսուցման ներառական մոտեցումների առաջխաղացում

Դպրոցից վաղաժամ հեռացումը մնում է Եվրամիության կարևորագույն խնդիրը: Չնայած միգրանտ երիտասարդներից շատերը հաջողակ ուսանողներ են, նրանց միջին կատարողականությունն ավելի ցածր է քան իրենց հայրենակից հասակակիցներից: Նույն կերպ գոյություն ունեն արական ու իգական սեռի ուսանողների հետաքրքրությունների և որոշ առարկաների կատարողականության տարբերություններ: Դպրոցները, այլ դերակատարների հետ, կարող են կարևոր դեր խաղալ դպրոցից վաղաժամ հեռանալու դեմ պայքարելու ու միգրանտ ուսանողների կրթությունը բարելավելու հարցում:

Նախագծերը պետք է

- բացահայտեն և զարգացնեն դպրոցակենտրոն և ուսանողակենտրոն ռազմավարություններ ու մեթոդներ, որոնք կօգնեն դպրոցը վաղ թողնելու վտանգի տակ գտնվող ուսանողներին, կդրդեն նրանց ավարտել իրենց ուսումնառությունը նշարունակել հետագա կրթությունն ու ուսուցումը
- բացահայտեն և զարգացնեն ուղիներ, որոնք կաջակցեն միգրանտ ուսանողներին օգտագործել իրենց կրթական ներուժը
- բացահայտեն և զարգացնեն դպրոցական և ուսանողակենտրոն ռազմավարություններ, դասավանդման, ուսուցման ու կարիերայի ընտրության հարցում գենդերային կարծրատիպերը հաղթահարելու համար
- աջակցեն դասավանդման և ուսուցման ներառական մոտեցումների զարգացմանը, որոնք ապահովում են բոլոր ուսանողների կարիքները, ներառյալ անապահով ուսանողները:

1.3 Ցանցային աշխատանքներ

1.3.1 Ձեռներեցության աջակցություն և կապեր գործարար աշխարհի հետ

Նախաձեռնության ու ձեռնարկատիրական ոգու զարգացումը, որպես առանցքային հմտություն[28], ներառում է միտքը գործի վերածելու կարողությունը, աշխատանքը նախագծերի միջև ու թիմերի հետ և տնտեսության գործունեության մասին սովորելը: Դպրոցները կարող են աջակցել այս հտության զարգացմանը խրախուսելով նախաձեռնությունը, նորարարությունը և ստեղծագործ միտքը և հաստատելով հաագործակցություններ գործարար աշխարհի հետ:

Ըստ այս գերակայության, գործընկեր կազմակերպությունները պետք է զարգացնեն անհրաժեշտ գիտելիքները՝ միմյանց փոխանցելով ռեսուրսներ և փորձ դպրոցներին օգնելու արդյունավետ ուղիները որոշելու և տարածելու համար, որպեսզի

- ստեղծեն ուսման այնպիսի միջավայրեր, որոնք խրախուսում են նախաձեռնությունները, ստեղծագործ միտքը և նորարարությունները աշակերտների ու աշխատակազմի մեջ
- համագործակցեն աշխատանքային աշխարհի հետ
- բարելավեն աշակերտների ուղղորդումը
- աջակցեն ուսուցիչների, դասընթացավարների և կրթական հաստատությունների ղեկավարների նախնական և շարունակական ուսուցում

1.3.2 Գիտական կրթությունն ավելի գրավիչ դարձնելու աջակցություն

Այնպիսի գլոբալ մարտահրավերները, ինչպիսին է կլիմայի փոփոխությունը, ավելի մաքուր և խելացի տնտեսության զարգացումը, ներառում է բնության մեջ մարդու գործունեության պատճառով առաջացած փոփոխությունների ճանաչումը և պատասխանատվությունը որպես անհատ քաղաքացի: Գիտության հիմնական գաղափարները հասկանալը և կայուն զարգացման հետաքրքրվածությունը դարձել են ակտիվ և պատասխանատու քաղաքացու բանալին:

Այս գերակայության շրջանակներում ցանցերը կայուն զարգացման համար պետք է բացահայտեն և տարածեն գիտության դասավանդման արդյունավետ մեթոդներ, ինչպիսին է հարցաքննման վրա հիմնված դասավանդումը, գիտական կրթության արդյունավետ մեթոդների ուղղորդումը և տեղեկատվական ծառայությունների մշակումը գիտական կրթության ու կարիերայի ոլորտում գենդերային անհավասարությունը կրճատելու համար:

[28] Եվրոպական Շրջանակում առանցքային հմտություն 7

1.3.3 Նախադպրոցական և վաղ մանկության կրթության ու խնամքի (ECEC) զարգացման ապահովում

Վաղ մանկության բարձրորակ կրթության ու խնամքի մատչելիությունը ապագայում արդյունավետ ուսուցման հիմքն է: Այն օգնում է երեխայի հասարակական զարգացմանը և օգտակար է հաշմանդամ երեխաների համար: Որակը կախված է աշխատակազմի հմտությունների, ուսումնական ծրագրի, ծնողների հետ համագործակցության և ընդհանուր կրթական միջավայրից: Ցանցային աշխատանքները պետք է հստակեցնեն, փոխանակեն և տարածեն արդյունավետ ուղիներ, որպեսզի

բարելավեն ուսուցիչների, դասընթացավարների և աշխատակազմի այլ անդամների հմտությունները և ուսումնական ծրագրի ու պարտադիր ուսուցման տարիքից ցածր երեխաների կրթական միջավայրի որակը

գտնեն և աջակցեն ուսումնական դժվարություններ կամ սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններ ունեցող մարդկանց

լեզվի ու գրագիտության վաղ զարգացման օժանդակություն

1.3.4 Հատուկ կարիքավորների կրթության զարգացում՝ ներգրավելով բոլոր երիտասարդ մարդկանց, հատկապես՝ հաշմանդամներին

Բազմազանության վրա հիմնավելն ու կրթության և ուսուցման ներառման սկզբունքների իրականացումը պահանջում է կրթական միջավայրերի, ռեսուրսների, ուսուցիչների ու դպրոցի ղեկավարների հմտությունների վերանայում, խոչընդոտների ուսումնասիրում և հնարավորությոնների հստակեցում:

Ցանցային աշխատանքները պետք է հստակեցնեն և տարածեն արդյունավետ մոտեցումներ, որոնք

խթանում են հաշվառումը, ներառյալ հատուկ դպրոցների դերի ընդլայնումը, որպեսզի վերջիններս դառնան ռեսուրս կենտրոններ

աջակցում են ուսուցիչներին, դպրոցի ղեկավարներին և դպրոցի մնացած աշխատակազմին ներգրավումը խթանելու համար:

2. ԷՐԱՍՄՈՒՍ. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Քաղաքականության համառոտագիր

ԵՄ բարձրագույն կրթության քաղաքականության նպատակն է աջակցել Անդամ երկրների բարձրագույն կրթական հաստատությունների համակարգերի

բարեփոխումներին՝ դարձնելով դրանք ավելի համախմբված և հասարակության գիտելիքների պահանջներին ավելի համապատասխան: Բարեփոխումներն անհրաժեշտ են գլոբալիզացիայի մարտահրավերներին դիմակայելու և եվրոպական աշխատուժը մարզելու և վերապատրաստելու համար: Դրանք պետք է հնարավորություն տան բուհերին որոշիչ դեր խաղալ Գիտելիքների Եվրոպայում և մեծ ներդրում ունենալ կրթության ու ուսուցանման եվրոպական համագործակցության թարմացված ռազմավարական շրջանակին և Եվրոպա 2020 Ռազմավարությանը[29] աջակցելու հարցում:

Միևնույն ժամանակ բարեփոխումները կապված են Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի 2020թ նպատակների (Բոլոնիայի գործընթաց) զարգացման հետ, ինպես 2009թ ընդունվել է Լովենի Նախարարական համաժողովում[30]:

Բարձրագույն կրթության քաղաքականության գերակայությունները սահմանված են համալսարանների օրակարգի արդիականացման՝ կրթության, հետազոտության, նորարարության[31] մասին 2006թ մայիսին հրապարակված Հաղորդագրության մեջ, որում Հանձնաժողովը առանձնացնում է բարձրագույն կրթության բարեփոխումների երեք հիմնական ոլորտներ՝

Ուսումնական ծրագրի բարեփոխումներ: Եռաստիճան համակարգ (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա), կարողությունների վրա հիմնված ուսուցում, ուսուցման ճկուն ուղիներ, որակավորումների ու կարողությունների ճանաչում, շարժականություն՝ Բոլոնիայի գործընթացին համապատասխան

Կառավարման բարեփոխումներ: Բուհերի ինքնավարություն և պատասխանատվություն, ռազմավարական համագործակցություններ, որակի ապահովում,

Ֆինանսավորման բարեփոխումներ: Բուհերի, վարձավճարների, դրամաշնորհների ու վարկերի անաչառություն և մատչելիություն, ԵՄ կողմից նպատակային ֆինանսավորում:

Այս հաղորդագրությունները հաստատվել են Խորհրդի տարբեր եզրակացություններում և որոշումներում: Բարձրագույն կրթության քաղաքականությունը ներշնչված է Եվրամիության այլ նախաձեռնություններից, որոնցից ամենակարևորը «Նոր հմտություններ նոր աշխատանքների համար» նախաձեռնությունն է[32]: Դրա գլխավոր նպատակն է մարդկանց անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները ստանալու մատչելիությունը և կիրառել դրանք համապատասխան աշխատանքներում: Սրան հասնելու համար կարևոր է ճիշտ

---

[29] Ibid 2և 6

[30] Բոլոնիայի գործընթաց 2020 – Բարձրագույն կրթության եվրոպական տարածքը նոր տասնամյակում Բարձրագույն կրթության համար պատասխանատու եվրոպական նախարարների համաժողովի պաշտոնական հաղորդագրություն, Լովեն, ապրիլի 28-29 2009թ: http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/conference/documents/Leuven_Louvain-la-Neuve_Communiqué_April_2009.pdf

[31] COM(2006)208 final: http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2006:0208:FIN:EN:PDF

[32] http://ec.europa.eu/education/focus/focus2043_en.htm

կանխատեսել, թե հատկապես որ հմտություններն են անհրաժեշտ ապագայում և օգնել մարդկանց զարգացնել այդ հմտությունները կրթության ու ուսուցման միջոցով:
Բուհերը հրավիրվում են ստանձնել իրենց լիիրավ դերը կրթական եռանկյունում (կրթություն, հետազոտություն, նորարարություն) և ընդգրկվել այնպիսի նախագծերում, որոնք կենտրոնանում են բուհերի ու ձեռնարկությունների միջև ամրապնդված համագործակցության վրա: Այս գերակայությամբ նախատեսվում է Տեխնոլոգիայի եվրոպական ինստիտուտի[33] հիմնում, սակայն ընդհանուր առմամբ այն վերաբերում է բարձրագույն կրթությանը: Հանձնաժողովի և դրան կից Հանձնաժողիվի Հաղորդագրության[34] կողմից նախաձեռնված Եվրոպական համալսարանի Բիզնես ֆորումը նույնպես ձգտում է ամրապնդել համագործակցությունը այս ոլորտում:
Որակի ապահովման[35] եվրոպական հետագա համագործակցության 2006թ հանձնարարականի իրականացումը կշարունակի գերակայություն մնալ: Հանձնաժողովը ընդունել է հանձնարարականի իրականացման առաջին Առաջընթացի մասին զեկույցը 2009թ սեպտեմբերին՝ առաջարկելով հետագա զարգացման համար[36] բազմաթիվ ոլորտներ:

Որակավորումների եվրոպական շրջանակի իրականացումը և Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակի միջև կապերի ամրապնդումը նույնպես կշարունակի գերակայություն լինել:
Ինչպես արտացոլված է 2008թ նոյեմբերին Եվրախորհրդի եզրակացությթան մեջ, շարժականության խթանման քաղաքական շեշտադրումը բարձրագույն կրթության օրակարգում կարևոր առաջնայնություն է: 2009թ Լովենում (Leuven/Louvain-la-Neuve) տեղի ունեցած Բոլոնիայի նախարարական համաժողովը համաձայնեց, որ 2020թ-ին եվրոպական շրջանավարտների 20 %-ը պետք է ունենա արտասահմանում կրթություն կամ աշխատանքի փորձ:
Էրասմուսի ծրագրի հատուկ և գործառնական նպատակները

[33] http://eit.europa.eu
[34] Եվրախորհրդարանի հանձնաժողովի հաղորդագրություն, Եվրոպայի Խորհուրդ, Եվրոպական տնտեսական ու սոցիալական հարցերով հանձնաժողով և Շրջանների հանձնաժողով: Համալսարանների արդիականացման նոր համագործակցություն. Համալսարանների Բիզնես երկխոսության ԵՄ ֆորում COM(2009) 158 final: http://ec.europa.eu/education/highereducation/doc/business/com158_en.pdf
[35] Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական հետագա համագործակցության Եվրախորհրդարանի և Խորհրդի հանձնարարագիր 15 փետրվար 2006թ (2006/L 64): http://eurlex.europa.eu/LexUriServ/site/en/oj/2006/l_064/l_06420060304en00600062.pdf
[36] Խորհրդի հանձնաժողովի զեկույց, Եվրախորհրդարան, Եվրոպական տնտեսական ու սոցիալական հարցերով հանձնաժողով և Շրջանների հանձնաժողով, բարձրագույն կրթության որակի ապահովման առաջընթացի մասին զեկույց COM(2009) 487 final: http://ec.europa.eu/education/higher-education/doc/report09_en.pdf .

Ինչպես սահմանված է Ծրագրի Որոշման 21.1 Հոդվածում, Էրասմուս ծրագրի հատուկ նպատակները հետևյալն են
ա) աջակցել Բարձրագույն Կրթության Եվրոպական շրջանակի նվաճմանը
բ) ամրապնդել բարձրագույն ու խորացված մասնագիտական կրթության ներդրումը նորարարության գործընթացում
Ինչպես սահմանված է Ծրագրի Որոշման 21.2 Հոդվածում, Էրասմուս ծրագրի գործառնական նպատակները հետևյալն են
ա) բարելավել որակը և ավելացնել ուսանողների ու ուսուցիչների անձնակազմի շարժականության ծավալը ամբողջ Եվրոպայում այնպես, որ մինչև 2012թ առնվազն 3 միլիոն անհատ ուսանող մասնակցի Էրասմուս և նրան հարակից այլ ծրագրերի
բ) բարելավել որակն ու ավելացնել Եվրոպայի բուհերի բազմակողմանի համագործակցության ծավալը
գ) ավելացնել Եվրոպայում ձեռք բերված բարձրագույն կրթության ու խորացված մասնագիտական կրթության որակավորումների թափանցիկության ու համատեղելիության աստիճանը
դ) բարելավել որակը և ավելացնել բուհերի ու ձեռնարկությունների համագործակցույթան ծավալը
ե) հեշտացնել նորարար փորձի զարգացումը կրթության և ուսուցման երրորդային մակարդակում, ինչպես նաև փորձի փոխանակումը մի երկրից մյուսը
զ) աջակցել նորարար ՏՀՏ-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և գործելակերպի զարգացմանը ցկյանս ուսումնառության համար
Էրասմուս ծրագրի գործողությունների գերակայությունները

2.1 Շարժականություն

Ուսանողների, ուսուցիչների և բուհերի այլ աշխատակիցների շարժականություն

Ուսանողների ու աշխատակազմի շարժականությունը առանցքային նշանակություն ունի Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ստեղծման հարցում: Էրասմուսին մասնակից հաստատությունների խնդիրն է ավելացնել ուսանողների շարժականությունը կրթության և աշխատանքի ընդունվելու համար այնպես, որ 2012թ-ին Էրասմուս ուսանողների թիվը հասնի 3 միլիոնի, ինչպես նաև նպաստել ուսուցիչների և մնացած աշխատակազմի շարժականության հետագա զարգացմանը:

Բարձրագույն կրթության հաստատություններից պահանջվում է ապահովել բարձր որակ ուսանողների ու աշխատակազմի շարժականության կազմակերպման հարցում, ինչպես ասված է Էրասմուս Համալսարանների կանոնադրության և Շարժականության մասին եվրոպական որակի կանոնադրության մեջ[37]:

[37] Եվրախորհրդարանի և Խորհրդի Համաձայնագիր 18 դեկտեմբերի 2006 կրթության ու ուսուցման նպատակով միջերկրային շարժականության վերաբերյալ: Շարժականության եվրոպական որակի կանոնադրություն:
(2006/L 394/5): http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2006:394:0005:0009:EN:PDF

Ուսանողների շարժականության վերաբերյալ եվրոպական մակարդակով որևէ ակադեմիական հատուկ գերակայություններ չեն նշվում:

Էրասմուս ինտենսիվ ծրագրեր

Նախապատվությունը կտրվի այն ծրագրերին, որոնք

- ներկայացնում են բազմամասնագիտական մոտեցումներ՝ խթանելով տարբեր առարկաներ սովորող ուսանողների փոխգործակցությունը
- ուշադրություն են դարձնում այն ոլորտներին, որոնք ներկայումս Էրասմուս ուսանողների շարժականության մեջ թերի են ներկայացված ամբողջ եվրոպական մակարդակում[38]
- նախատեսված են ձեռնարկատիրական հմտություններ սովորեցնել ուսանողներին ցանկացած ոլորտի համար[39]

Այս գործողության շրջանակներում նշված գերակայությունները ազգային մակարդակով սահմանելու հնարավորություն չի նախատեսվում:

Էրասմուս լեզվի ինտենսիվ դասընթացներ

Այս դասընթացները առանցքային նշանակություն ունեն շարժական ուսանողների համար լեզվական ու բազմամշակութային կարողությունների զարգացման և Եվրոպայում բազմալեզվության խթանման համար: Այնուամենայնիվ այս գործողության շրջանակներում եվրոպական կամ ազգային առաջնայնություններ չկան:

2.2 Բազմակողմանի նախագծեր

Էրասմուսի բազմակողմանի նախագծերն աջակցում են բուհերի՝միմյանց և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությանը:

Նախապատվությունը կտրվի այն ոլորտներին ու թեմաներին վերաբերող նորարար նախագծերին, որոնց արդեն իսկ ֆինանսավորված ծրագրերի շրջանակներում բավարար չափով չեն անդրադարձել:

2.2.1 Համագործակցություն բուհերի ու ձեռնարկությունների միջև

Գերակա նախագծերը պետք է օժանդակեն այն գործողությունները, որոնք միավորում են բուհերին և գործընկերներին՝ ձեռնարկություններին, կազմակերպություններին,

---

[38] Շատ ուսումնասիրվոր ոլորտները հետևյալն են՝բիզնես, հասարակական գիտություններ, արվեստաբանություն, հումանիտար գիտություններ, լեզուներ և իրավունք

[39] Ձեռներեցային դասընթացների հնարավոր հիմնական բովանդակությունը համապատասխանում է բոլոր ոլորտների ուսանողներին, բայց կախված ուսումնառության հստակ ոլորտից, ավելի շեշտադրվում է որևէ կոնկրետ ոլորտ: Օրինակ, Բիզնես դասընթացներ՝ բիզնեսի նախաձեռնում, ՓՄՁ–ների կառավարում, Գիտություն և տեխնոլոգիաներ՝ ինտելեկտուալ սեփականություն, կառավարման միջոցների կիրառում, մարքեթինգ, արտոնագրում, հումանիտար գիտություններ, արվեստներ և դիզայն՝ ինքնակառավարում, սոցիալական ձեռնարկատիրություն, սպառողակենտրոն նորարարություն և այլն:

առևտրական պալատներին, սոցիալական գործընկերներին կամ տեղական/տարածաշրջանային մարմիններին:

Այս նախագծերը պետք է իրապես համագործակցեն բուհերի և գործարար աշխարհի հետ, հաստատությունների երկկողմանի մասնակցությամբ: Նախապատվություն կտրվի այն նախագծերին, որոնք նպատակ ունեն

ամրապնդել ներքին ու արտաքին կապը կրթական գործողությունների, բիզնեսի ու աշխատանքի կարիքների միջև՝ գնահատելով հետագա հմտությունների կարիքը, խթանելով բիզնեսի ներդրումը դասընթացի մեջ, ինչպես սահմանված է "Նոր հմտություններ նոր աշխատանքների համար" նախաձեռնության մեջ կամ հեշտացնելով ձեռնարկատիրական հմտությունների ձեռքբերումը

զարգացնել կրթական ծառայությունները, ինչպես, օրինակ դասընթացները, որոնց նպատակն է աշխատողների գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացումը (ներառյալ լեզվի իմացությունը՝ մրցունակությունը մեծացնելու նպատակով), բարձր մակարդակի մասնագիտական վերապատրաստումները և այլն

2.2.2 Սոցիալական ներգրավվածությունը բարձրագույն կրթության մեջ

Գերակա նախագծերը պետք է աջակցեն այն գործողություններին, որոնք նպատակաուղղված են բարձրագույն կրթության մեջ սոցիալական ներգրավվածության բարելավմանն ու ավելացմանը: Գլխավոր նպատակը մասնակիցների ընդլայնումն է, խոցելի խմբերի ուսանողների և ոչ ավանդական կերպով սովորողների ուսման արդյունքների բարձրացումը, գենդերային հավասարության աճը՝ հատկապես գիտության ու տեխնոլոգիայի ուսուցման ոլորտներում: Նախագծերը կարող են ձգտել նաև ուսուցման ճկուն ուղիների միջոցով ավելացնել ցկյանս ուսումնառությունը և զարգացնել բուհերի հասարակական պատասխանատվությունը:

Նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք նպատակ ունեն

ընդլայնել խոցելի խմբերի և ոչ ավանդական կերպով սովորողների բարձրագույն կրթություն ստանալու մատչելիությունը, օրինակ՝ նպաստելով նախկինում ստացած ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչմանը և զարգացնելով կամ ամրապնդելով ուղղորդուման մատչելիությունը:

զարգացնել ճկուն ծրագիր հատկապես անհատական ուսուցման երթուղիներով սովորողների համար (ներառյալ հեռակա ուսուցումը), որպեսզի բավարարեն նրանց հատուկ կարիքները բարձրագույն կրթության ժամանակ

մշակել բարձրագույն կրթության որակը բարելավող մեթոդներ, ինչպես նաև ամրապնդել անհատական աջակցությունը (ֆինանսական և այլն) և ուսանողների ուղղորդումը

զարգացնել բուհերի սոցիալական պատասխանատվությունը, ներառյալ համայնքների գործունեությունները

2.2.3 Շարժականության ռազմավարություններ և բարձրագույն կրթության մեջ շարժականության խոչընդոտների վերացում

Գերակա նախագծերը պետք է աջակցեն բարձրագույն կրթության համակարգում շարժակաությունը խթանելու կամ դրա խոչընդոտները վերացնելու նորարար ռազմավարություններին:

Այս գերակայությունը ներառում է նաև այն ծրագրերը, որոնք աջակցում են վիրտուալ շարժականությանը և Էրասմուս Վիրտուալ ուսումնական հաստատությունների գործողությունների հետ համատեղ ընդգրկված են մասնակից բուհերում ՏՀՏ-ի արդյունավետ ինտեգրման գլոբալ ռազմավարությունների մեջ:

Նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք կենտրոնացել են հետևյալ խնդիրների վրա

մշակել կրթական շարժականությանը նպաստող ռազմավարություններ, օրինակ խթանել «շարժականության պատուհաններ» ուսումնական ծրագիրը կամ խրախուսել ուսուցիչների ներդրումը շարժականությունը խթանելու հարցում:

վերլուծել և հաղթահարել շարժականության հատկապես այն խոչընդոտները, որոնք խանգարում են ուսանողի՝ արտասահմանում ուսման նպատակով անցկացրած ժամանակաշրջանի լրիվ ճանաչմանը և առկա գործիքների լրիվ օգտագործմանը (ECTS, Europass դիպլոմի միջուկ…)

հասանելի դարձնել միջերկրային շարժականության հնարավորությունների մասին ազգային կամ տարածաշրջանային մակարդակով համապատասխան և թարմ տեղեկատվությունը

վիրտուալ ուսումնական հաստատությունների համար ապահովել կրթական բաց ռեսուրսներ՝ կազմակերպչական, տեխնիկական և որակին վերաբերող հարցերը եվրոպական մակարդակով ավելի դյուրամատչելի դարձնելու նպատակով

ամրապնդել վիրտուալ շարժականությունը՝ ապահովելով ուսուցման վիրտուալ ռեսուրսների մատչելիություն և առցանց ավանդական դասընթացներ

2.2.4 Բուհերի օրակարգի արդիականացման աջակցություն (*ներառյալ Ուսումնական ծրագրերի, ղեկավարման ու ֆինանսավորման բարեփոխումները)*

Գերակա նախագծերը պետք է աջակցեն բուհերի օրակարգի արդիականացմանը վերաբերող գործողություններին: Այս գերակայությունը փոխարինում է Էրասմուսի նախկինում առանձին ներկայցվող ծրագրերին, որոնք են օրակարգի զարգացումն ու բուհերի արդիականացումը:

Նախագծերը պետք է ուղղված լինեն օրակարգի արդիականացման առնվազն մեկ ոլորտին: Դրանք են ուսումնական ծրագրի բարեփոխումները (ներառյալ օրակարգի զարգացման նախագծեր), ղեկավարման կամ ֆինանսավորման բարեփոխումները:

Նախապատվությունը կտրվի ուսումնական ծրագրի բարեփոխումների այն նախագծերին, որոնք նպատակ ունեն

զարգացնել շրջանավարտների աշխատունակությունը գնահատելու և խթանելու միջոցներն ու նախաձեռնությունները

նախագծել համակարգված ծրագրեր, որոնք ներառում են

(1) ուսուցման ամբողջական շրջան(բակալավր, մագիստրոսական և դոկտորական աստիճան) և կրկնակի կամ միասնական դիպլոմի ճանաչում

(2) շարունակական կրթության համար ուսումնական ծրագրեր և մոդուլներ

(3) բարձր միջդիսցիպլինար ոլորտների և միջսեկտորային մոտեցումների դասավանդման մոդուլներ:

Ղեկավարման բարեփոխումների դեպքում նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք նպատակ ունեն

հեշտացնել որակի ապահովման եվրոպական համագործակցությունը, օրինակ՝սահմանել ու իրականացնել ուսումնական ծրագրերի որակի արտաքին ու ներքին գնահատման նոր ընթացակարգեր

ընդլայնել բուհերի ինքնավարությունն ու հաշվետվությունը, բարելավել կառավարման ռազմավարության համակարգերը

խթանել բուհերի բազմազանության ու գործունեության թափանցիկությունը:

Ֆինանսավորման բարեփոխումների դեպքում նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք նպատակ ունեն

զարգացնել արդյունավետ ֆինանսավորման ռազմավարությունը, ներառելով ֆինանսավորման արդյունավետությունը բարձրացնող բոլոր մեխանիզմները

աջակցել բուհերի ֆինանսավորման բազմազանությանը

գնահատել և օժանդակել բուհերի ներդրումների վերադարձը

2.2.5 Բարձրագույն կրթության մեջ բարձր առաջադիմության և նորարարարությունների խթանում

Գերակա նախագծերը պետք է աջակցեն այն գործընթացներին, որոնք վերաբերում են գիտելիքների եռանկյունուն՝ կրթությանը, հետազոտություններին և նորարարություններին: Եվրոպական բուհերը ցույց են տվել իրենց հսկայական ներուժը դասավանդման ու հետազոտման ոլորտներում, սակայն հաճախ այս երկու ոլորտները օպտիմալ կերպով փոխկապակցված չեն ոչ միայն միմյանց, այլև եռանկյունու երրորդ կողմի՝ նորարարության հետ: Այս նախագծերը Եվրամիության նախաձեռնությունների միջոցով պետք է փորձեն լրացնել այդ բացը՝ երեք ոլորտները նոր և արդյունավետ կերպով իրար կապելով, ինչպես օրինակ Նորարարության և տեխնոլոգիայի եվրոպական ինստիտուտի (EIT) հիմնումն է:

Կոնսորցիումները, որոնք մասնակցում են ԵՄ հետազոտական և նորարարական ծրագրերին,ինչպիսիք են Շրջանակի ծրագրերը, հատկապես խրախուսում են նախագծերի այն հայտերը, որոնք իրենց գործունեությունները համալրել են ի սկզբանե իրենց աշխատանքային պլանի մեջ չնախատեսված կրթական նախաձեռնություններով:

Նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք օգնում են խթանել որակի բարձրացումն ու նորարարությունները և կենտրոնացած են հետևյալի վրա

բարելավել որակը, դասավանդման համապատասխանությունը և դասավանդման նորարար մեթոդների օգտագործումը՝ ապահովելով ընթացիկ հետազոտության սերտ կապ, օրինակ հետազոտական հաստատությունների աշխատակիցներին ընդգրկելով կրթական գործողությունների մեջ:

հատկապես բակալավրի մակարդակի ուսանողներին հետազոտական ոլորտում աշխատելու հնարավորություն ապահովել, օրինակ կապեր հաստատել հետազոտական նախագծերի, լաբորատորիաների հետ

խրախուսել ուսանողների նորարար ու ձեռնարկատիրական մտածելակերպը՝ թույլ տալով նրանց կիրառել իրենց գիտելիքներն ու հետազոտական ունակությունները, օրինակ՝ խրախուսելով փոքր ընկերությունների ստեղծումը

2.3 Ակադեմիական ցանցային աշխատանքներ

Էրասմուսի այս նախագծերը նպատակ ունեն հավաքել տրված ոլորտին հատուկ հմտությունների ամենաընդարձակ և ամենաառաջադեմ փաթեթը: Ակադեմիական շփումները պետք է միավորեն շահագրգիռ կողմերին և ուղղված լինեն եվրոպական բարձրագույն կրթության քաղաքականությանը առնչվող հարցերին: Ուշադրության կենտրոնում պետք է լինի գիտելիքների և լավ գործելակերպի տարածումը, մեթոդաբանությունների քննարկունը, ինչպես նաև ստեղծագործ մոտեցումների և նորարարության խթանումը: Շփումները պետք է ուղղված լինեն ոլորտի ընթացիկ և հետագա զարգացմանը: Նախապատվությունը կտրվի այն նորարար ցանցային աշխատանքներին, որոնք կենտրոնանում են այնպիսի թեմաների վրա, որոնց ամբողջապես անդրադարձ չի կատարվել արդեն ֆինանսավորվող աշխատանքներում: Նախկինում ֆինանսավորված ծրագրերի մասին տեղեկատվություն կարող եք գտնել հետևյալ կայքի Էրասմուսի ծրագրերի մեջ
http://eacea.ec.europa.eu/llp/erasmus/erasmus_compendia_en.html

3. ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ – ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Քաղաքականության համառոտագիր

Լեոնարդո Դա Վինչի ծրագրի սկզբունքների նախահիմքը Կոպենհագենի գործընթացն է, որը թարմացվել է Բորդոյի կոմյունիկեով (2008)[40] և որը կվերաթողարկվի 2010թ դեկտեմբերին Բրյուգեում: Գործընթացը հիմնականում սևեռված է մասնագիտական կրթության ու ուսուցման համակարգերի գրավչության, որակի և

[40] http://ec.europa.eu/education/vocational-education/doc1143_en.htm

կատարողականության ավելացման և թափանցիկության, տեղեկատվական ու ուղղորդման համակարգերի բարելավման, հմտությունների ու որակավորումների ճանաչման և եվրոպական ծավալների ամրապնդման վրա: Առաջիկա տարիներին մեզ սպասվող մարտահրավերները նկարագրված են 2010թ հունիսին Եվրահանձնաժողովի ՄԿՈՒ-ի մասին քննարկման մեջ[41]:

Մասնագիտական կրթության և ուսուցման համար եվրոպական ընդհանուր մեթոդների փորձարկումը, օգտագործումը և հետագա զարգացումը խթանող հատուկ նախաձեռնությունները կշարունակեն լինել ծրագրի գործունեության կենտրոնում: Սա ներառում է մասնագիտական կրթության և ուսուցման Եվրոպական կրեդիտային համակարգի զարգացումն ու փորձարկումը, Եվրոպական որակավորման շրջանակի կիրառումը, և ՄԿՈՒ-ի համար որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի խթանումը, զարգացումն ու օգտագործումը: Այս գործողությունները կնպաստեն նաև փոխադարձ ուսուցմանը, համատեղ աշխատանքի և վստահության ամրապնդմանը, շարժականության և փորձի փոխանակման ավելացմանը: Երիտասարդների շարժականությունը խթանող փաստաթղթի (նոյեմբեր 2008[42] և հունիս 2009[43]) և «Երիտասարդությունը շարժման մեջ» նախաձեռնության վերաբերյալ խորհրդի եզրակացության համաձայն հատուկ շեշտ է դրվելու երիտասարդների՝ ՄԿՈՒ ուսանողների համար շարժականության հնարավորություններ ստեղծելու վրա:
Լեոնարդո դա Վինչի ծրագում հատուկ ուշադրության կարժանանա **սեկտորների[44]**, **հասարակական գործընկեր կազմակերպությունների և ընկերությունների՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցության** հեշտացումը: ՄԿՈՒ երիտասարդ ուսանողների շարժականությունը խթանող տարածաշրջանային համագործակցության ռազմավարությունները ունեն հետևյալ նպատակները:
Լեոնարդո դա Վինչի ծրագրի հատուկ և գործառնական նպատակները
Ինչպես սահմանված է ծրագրի Որոշման 25.1 հոդվածում, Լեոնարդո դա վինչի ծրագրի հատուկ նպատակներն են

[41] Եվրախորհրդի, Ռեգիոնների եվրոպական Տնտեսագիտական և սոցիալական հանձնաժողովի Հաղորդագրություն. Եվրոպա 2020 ռազմավարությանն աջակցող Մասնագիտական կրթության ու ուսուցման Եվրոպական հաագործակցության նոր խթան COM(2010) 296 final : http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2010:0296:FIN:EN:PDF

[42] Ibid 8
[43] Ibid 9
[44] Սեկտորներ Eurostat կոդերի և նկարագիրների համաձայն: Եվրոպայում տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգում http://epp.eurostat.ec.europa.eu/statistics_explained/index.php/Statistical_classification_of_economic_activities_in_the_European_Community_(NACE)

ա) աջակցել մասնակիցներին հետագա ուսուցման, գիտելիքի ձեռքբերման և օգտագործման, անձնական զարգացումը հեշտացնող որակավորումների, զբաղվածության և եվրոպական աշխատաշուկային մասնակից լինելու հարցում
բ) օժանդակել մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի, հաստատությունների և գործելակերպերի որակի և նորարարությունների բարելավմանը
գ) ավելացնել մասնագիտական կրթության ու ուսուցման գրավչությունը, աշխատողների և անհատների շարժականությունը և հեշտացնել աշխատող սովորողների շարժականությունը

Ինչպես նշված է ծրագր որոշման Հոդված 25.2-ում, Լեոնարդո դա Վինչի ծրագրի գործառնական նպատակները հետևյալն են
ա) բարձրացնել նախնական և շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման մեջ ներգրավված մարդկանց շարժականության որակն ու ծավալը ամբողջ Եվրոպայում, որպեսզի Ցկյանս ուսուցման ծրագրի ավարտին տարեկան առնվազն 80 000 մարդ աշխատելիս լինի ձեռնարկություններում:
բ) բարելավել հաստատությունների կամ կազմակերպությունների միջև համագործակցության որակը և ավելացնել դրանց ծավալները՝ ապահովելով ուսուցման հնարավորություն, ձեռնարկություններ, հասարակական գործընկերներ և այլ համապատասխան մարմիններ ամբողջ Եվրոպայով մեկ
գ) հեշտացնել մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում նորարար՝ երրորդային մակարդակից տարբերվող գործելակերպերի զարգացումը և դրանց փոխանցումը, այդ թվում՝ մեկ մասնակից երկրից մյուսներին
դ) բարելավել որակավորումների և հմտությունների թափանցիկությունը և ճանաչումը, ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքում ձեռքբերվածները
ե) խրախուսել ժամանակակից օտար լեզուների ուսուցումը
զ) աջակցել նորարար ՏՀՏ-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և ցկյանս ուսումնառության գործելակերպի զարգացմանը

Լեոնարդո դա վինչի ծրագրի գործողությունների գերակայությունները[45]

[45] Հարկ է նշել, որ շարժականության գործողությունների և Լոենարդո դա Վինչի 'նորարարությունների փոխանցում' ծրագրերի շրջանակներում ազգային լիազորված մարմինները կարող են որոշել որոշակի հավելյալ ազգային գերակայություններ, ինչպիսիք են ոլորտների տարածքները, թիրախ երկրները և այլն: Այս գերակայությունները պետք է համապատասխանեն այս փաստաթղթում սահմանված եվրոպական առաջնայնություններին և համաձայնեցվեն Եվրախորհրդարանի հետ: Դրանք հայտնի կդառնան կամ հատուկ ազգային հայտարարագրերի կամ ազգային գործակալությունների կայքերի միջոցով:

3.1 Շարժականություն և համագործակցություններ

Ինչ վերաբերում է մասնագիտական ուսուցում ստացողների և մասնագետների շարժականությանը, շեշտը դրվում է շարժականության կառավարման որակի վրա, այդ թվում՝ մանկավարժական, լեզվաբանական և մշակութային նախապատրաստությունները արտասահմանում ապրելու համար հիմնվելով շարժականության վերաբերյալ եվրոպական կանոնակարգում սահմանված սկզբունքների վրա:

Խրախուսվում է ՄԿՈՒ-ի համար Եվրոպական կրեդիտային համակարգի տարրերի (ուսուցման արդյունքների, գնահատման և ճանաչման նկարագրություն) զարգացումն ու կիրառումը, ինչպես նաև շարժականության փորձի ուղղորդման և կայունության ազդեցությունը օպտիմալացնելու համար: Սկսնակների համար շարժականության ոլորտում նախապատրաստական գործողությունները հանգեցրել են այն եզրակացության, որ այս թիրախային խումբը Լեոնարդո դա Վինչի ծրագրում պետք է հատուկ տեսանելիություն ունենա: Այս նախագծերում շեշտվում է մրցունակ միջնորդ մարմինների կարևոր դերը[46] Փոքր և միջին ձեռնարկություններում որակի և ներգրավվման հասնելու համար:

Այս գործողությունն ընդգրկում է շարժականությունը հետևյալ թիրախային խմբերի ուսուցման և վերապատրաստման համար

(1) նախնական մասնագիտական կրթություն ստացողներ

Ա. նախնական մասնագիտական կրթության, այլընտրանքային ուսուցման կամ ձեռնարկություններում աշխատանքի հիման վրա[47] կրթություն ստացողներ

Բ. դպրոցի հենքի վրա նախնական մասնագիտական ուսում ստացողներ

(2) աշխատաշուկայում և շարունակական մասնագիտական ուսուցման մեջ ընդգրկված մարդիկ

(3) մասնագիտական կրթութան և ուսուցման մասնագետներ

Քանի որ Կոմենիուս Համագործակցությունները ընդգրկում են նաև դպրոցների միջև փոխադարձ կապը, Լեոնարդո դա Վինչի Համագործակցության ծրագրերը պետք է ուշադրություն դարձնեն մասնագիտական կրթության և ուսուցման և գործարար աշխարհի միջև համագործակցությանը և երկուստեք գործընկերներ ներգրավեն:

3.2 Բազմակողմանի նախագծեր – Նորարարությունների փոխանցում

Լեոնարդո դա Վինչի ծրագրի երկու բազմակողմանի նախագծերը հետևյալն են

[46] Իրավասու միջնորդ մարմինները հասարակակակն կամ կիսահասարակակակ խմբեր են, որոնց առաքելությունն է աջակցել գորխարար կամ ուսուցման ոլորտների կրության և ուսուցման գործողությունններում: Այդպիսի մարմինների օրինակ են արհեստների տները, առևտրի պալատները, բիզնես ներկայացուցչությունները, միությունները, աշխատանքային գրասենյակները:

[47] Ուսումը կարող է ներառել նաև մեծահասակներին:

բազմակողմանի նախագծեր նորարարությունների փոխանցման համար (ապակենտրոնացված կառավարում)

բազմակողմանի նախագծեր նորարարությունների զարգացման համար (կենտրոնացված կառավարում)

Ծրագրերի այս երկու տեսակների միջև տարբերությունը մանրամասնորեն նկարագրված է Ցկյանս ուսումնառության ծրագրի ուղեցույցում[48]:

Ռիսկային խմբերի կարողությունների մակարդակի բարձրացումը[49] և հավասար հնարավորությունների ապահովումը համարվում են գերակայություններ, որոնք առկա են Լեոնարդո դա Վինչի բոլոր նախագծերում և գերակայություններում:

ՏՀՏ և էլեկտրոնային ուսուցման մեթոդների կիրառումը մասնագիտական ուղղվածությամբ լեզուների ուսուցումը և **լեզվի բովանդակության վրա հիմնված ուսուցումը** խրախուսվում է Լեոնարդո բոլոր բազմակողմանի ծրագրերի համար:

3.2.1 ՄԿՈՒ և գործարար աշխարհի հետ համագործակցության խթանում

Գերակա նախագծերը պետք է աջակցեն գործարար աշխարհի հետ սերտ կապերին, ՄԿՈՒ-ն աշխատանքային շուկայի կարիքներին ավելի համապատասխան դարձնելու համար: Նածագխերը պետք է նպատակ ունենան բարելավել սեկտորային նույնականացումը և անհրաժեշտ հմտությունների ու կարողությունների կանխատեսումը և դրանց ինտեգրումը ՄԿՈՒ-ի դրույթներին: Դա ենթադրում է նաև նպաստել ուսման ինտեգրմանը աշխատանքում: Այս գերակայությունը պետք է աջակցի «Նոր հմտություններ նոր աշխատանքների համար» ռազմավարության[50] կիրառմանը, հաշվի առնելով մարտահրավերները: Վերջիիններից են բնապահպանական և դեմոգրաֆիական փոփոխությունները և այդ տարածքում աշխատանքի աճող կարիքները, օրինակ այսպես կոչված «կանաչ աշխատանքները» կամ «սպիտակ աշխատանքները» (բժշկական և հասարակական խնամք): Հայտերը պետք է ընդգրկեն հետևյալ բնագավառներից մեկի գործելակերպը

նպաստել տարբեր շահառուների ներգրավմանը՝ ՄԿՈՒ և որակավորումների համակարգերը աշխատաշուկայի պահանջներին ավելի համապատասխան դարձնելու համար՝ հաշվի առնելով համակարգի փոփոխությունները, ինչպիսիք են ուսուցման արդյունքների փախանցումը և հմտությունների վրա հիմնված համակարգերը

փորձարկել և գործնականում կիրառել անհրաժեշտ կարողությունների կանխատեսման համար ընդհանուր մեթոդներ և համակարգեր՝ ՄԿՈՒ ներգրավելով կազմակերպություններ, ոլորտային ձեռնարկություններ, սոցիալական գործընկերներ

[48] Ibid 14

[49] Ռիսկային խմբերը աշխատաշուկայում որոշաակի դժվարություններ ունեցող խմբերն են, ինչպես օրինակ դպրոցից վաղաժամ հեռացողները, ցածր որակավորում ունեցող աշխատողները, հաշմանդամ մարդիկ, ներգաղթածները և ազգային փոքրամասնությունները:

[50] Ibid 3

նպաստել գործարար աշխարհի և հաստատություններում գործող ՄԿՈՒ-ի կապի ամրապնդմանը՝ խթանելով ՄԿՈՒ ծրագրերում աշխատանքային փորձի, աշխատանքային գործընթացին մասնակից լինելու և աշխատանքի վրա հիմնված ուսուցման նորարար մոդելների կիրառումը:

3.2.2 ՄԿՈՒ ուսուցիչների, դասընթացավարների, կրկնուսույցների և ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարների նախնական և շարունակական ուսուցման աջակցություն

Այս գերակայությունը նպատակաուղղված է զարգացնելու ՄԿՈՒ ուսուցիչների, դասընթացավարների, կրկնուսույցների, դպրոցների/համալսարանների ղեկավարների և ողողորդող մասնագետների հմտությունները և կարողությունները՝ ապագա մարտահրավերներին դիմակայելու համար: Գերակա նախագծերը պետք է աջակցեն նորարարությունների փոխանցմանը հետևյալ բնագավառներում

ՄԿՈՒ մասնագետների դերը այնպիսի փոփոխությունների հարցում, ինչպիսիք են ուսման արդյունքների փոխանցումը, հմտությունների վրա հիմնված համակարգերը և նախկին ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացումը

ՄԿՈՒ մասնագետների և գործարար աշխարհի միջև կապերի ամրապնդում, անհատների աշխատանքային կարողությունների զարգացում[51]

նրանց մանկավարժական ունակություններն ու առարկայական ծրագրի մշակման հարցում նրանց ներգրավվածությունը

այնպիսի հմտությունների ձեռքբերում, որոնք թույլ կտան ՄԿՈՒ մասնագետներին սովորեցնել ընդհանուր կարողություններ, ինչպիսիք սահմանված են Ցկյանս ուսումնառության համար անհրաժեշտ առանցքային հմտությունների 2006թ հանձնարարագրերում:

3.2.3 ՄԿՈՒ հիմնական կարողությունների ձեռքբերման խթանում

Հիմնական կարողությունների ձեռքբերումը[52] առանձնահատուկ կարևորություն ունի ՄԿՈՒ-ում, քանի որ որոշ սովորողներ մասնագիտական կրթություն են ստանում առանց ուսումը հաջողությամբ ավարտելու համար անհրաժեշտ առանցքային կարողությունների: Մյուս կողմից հիմնական կարողությունները կարևոր են ՄԿՈՒ-ից դուրս անհատական կրթական ուղիների խթանման, կրթական համակարգերում թափանցելիությունը բարելավելու և անցումային փուլերը (ՄԿՈՒ-ից աշխատաշուկա

[51] Euroguidance ցանցը - http://www.euroguidance.net

[52] Առանցքային հմտությունների եվրոպական շրջանակ http://ec.europa.eu/education/lifelong-learningpolicy/doc42_en.htm

կամ վերաինտեգրում գործազրկությունից աշխատաշուկա) հեշտացնելու համար: Որոշ հիմնական կարողություններ նպաստում են ՄԿՈ գրավչությանը:
Նախագծերը պետք է խթանեն հետևյալ խնդիրներից մեկին

- զարգացնել նախնական մասնագիտական ուսուցման հիմնական կարողությունների ձեռքբերման հայեցակարգեր, մասնավորապես՝ թվային և տեխնոլոգիական հմտություններ, ձեռներեցություն, օտար լեզուներ (լեզուների մասնագիտական ուղղվածությամբ ուսուցում և լեզվի բովանդակային ուսուցում), առավել բազմազան հասարակության մեջ ապրելու ու աշխատելու կարողություններ և ակտիվ քաղաքացիություն
- զարգացնել շարունակական մասնագիտական ուսուցման հիմնական կարողությունների ձեռքբերման գործելակերպեր
- զարգացնել նախնական մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակներում օտար լեզուների ուսուցմանը աջակցող և սովորողների կարիքներին և հնարավորություններին համապատասխան մոտեցումներ

3.2.4 ՄԿՈ շարժականության ռազմավարությունների զարգացում և փոխանցում

Կրթության և ուսուցման 2020 ռազմավարության ծրագրում ուսման շարժականության դրական ազդեցությունը և կարևորությունը խոշոր գերակայություն են դարձել: Հատկապես ՄԿՈ-ում շարժականության մասնակցությունը համեմատաբար ցածր է և բոլոր մակարդակների համապատասխան մարմինների կողմից այն աջակցության որոշակի ռազմավարությունների կարիք ունի: ՄԿՈ շարժականությունը բաղկացած է ձեռնարկություններում ուսուցման տեղաբաշխումից, այսինքն ուղղված է գործնական փորձին և ունի սերտ կապեր գործարար հատվածի հետ: Որակյալ աշխատատեղեր ապահովելու, գործընկերներ գտնելու և փոքր և միջին ձեռնարկատիրություններին աջակցելու համար կազմակերպությունների միջև պետք է համագործակցության կայուն համակարգեր ստեղծվեն: Նախորդ տարիներին բազմաթիվ հայեցակարգեր և մոտեցումներ են մշակվել, որոնք կարող են ընդունվել և փոխանցվել այլ միջավայրեր:

ՄԿՈ շարժականությունը օրինաչափություն դարձնելու համար կարևոր է առկա ուսումնական ծրագրի մեջ ներառել շարժականությունը և միջազգային հմտությունները: Աշխատաշուկան պահանջում է այս հմտությունները և դրանք բարձրացնում են ՄԿՈ գրավչությունը:
Հատկապես ողջունելի են այն հայտերը, որոնք ներառում են մի շարք երկրներում շարժականության բարձրացման հարցում կարևոր դեր ունեցող սեկտորային մակարդակի ռազմավարությունները, մասնաճյուղերը կամ ՄԿՈ բնագավառները:
Գերակա բազմակողմանի ծրագրերը պետք է ունենան հետևյալ նպատակներից մեկը

- ընդունել և փոխանցել ՄԿՈ շարժունակության խթանման կառուցվածքներ և գործիքներ, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցություն և տեղաբաշխում ձեռնարկատիրությունների միջև

- փոխանցել շարժունակությունը ՄԿՈՒ ուսումնական ծրագրում ինտեգրելու մոտեցումները հատուկ հատվածներում, ճյուղերում, ՄԿՈՒ ոլորտներում կամ շրջաններում
- փոխանցել սովորողների, մասնավորապես ձեռնարկություններում փորձնակների երկկողմանի փոխանակման մոդելները

3.2.5 ՄԿՈՒ ԵԿ ուսման արդյունքների և որակավորումների թափանցիկության և ճանաչման համար

Գերակա նախագծերը պետք է պատրաստեն, կազմակերպեն և ապահովեն մեթոդների, ուղեցույցների և ՄԿՈՒԵԿ սկզբունքների իրականացման և օգտագործման նպատակին ծառայող հարակից գործիքների փոխանակումը շարժականության և ցկյանս ուսումնառության համար: Սա ներառում է գործիքներ, ընթացակարգեր և մեթոդներ, որոնք սահմանված են հետևյալ նպատակներով

- ուսուցման արդյունքների որակավորումների նախագծում
- աշխատանքային միջազգային հմտությունների հետ կապված ուսման արդյունքների զարգացում և փոխանցում: Հատուկ շեշտ պետք է դրվի ՄԿՈՒ մասնագետների նախնական և շարունակական ուսուցման ճանաչված որակավորումների փոխանցման և ինտեգրման վրա
- ՄԿՈՒԵԿ միավորների և որակավորումների բաշխում
- ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով ձեռքբերված արդյունքների գնահատման, փոխանցման, վավերացման և կուտակման ընթացակարգեր
- գործառնական համագործակցությունների մշակում:

Հայտերը պետք է վերաբերեն հետևյալ բոլոր կետերին

- գործնական փոխանցման գործընթացներ, որոնք նպատակաուղղված են ՄԿՈՒ շահառուների կողմից հեշտացնել ՄԿՈՒԵԿ-ի ըմբռնումը և կիրառումը
- գործնական լուծումներ, որոնք նպատակաուղղված են ՄԿՈՒ-ում նորարար գործելակերպերի զարգացմանը, կիրառում են ՄԿՈՒԵԿ-ը և դրա փոխանցումը՝ ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության շարժականությունը և վավերացումը
- քաղաքականություն մշակողների, դասավանդողների և որակավորումների համար պատասխանատու այլ անձանց փոխանցվող ռազմավարությունների և մոտեցումների մշակում և տարածում
- բաց տեղեկատվության և ուղեկցող ռեսուրսների ապահովում՝ ՄԿՈՒԵԿ կազմակերպչական, տեխնիկական և որակին առնչվող հարցերի բովանդակությունը եվրոպական մակարդակով մատչելի դարձնելու համար

3.2.6 Որակի ապահովման համակարգերի բարելավում ՄԿՈՒ-ում

Գերակա նախագծերը պետք է նպաստեն նախկինում նորարարության զարգացման ծրագրերի, Լեոնարդո դա Վինչի դրամաշնորհ ստացած նախագծերի կամ ՄԿՈՒ որակի ապահովման նարարար մոտեցումների օգտագործմանը՝ Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի իրականացմանը և օգտագործմանը

նպաստող ուղեցույցերի և գործիքների փոխանցումը կազմակերպելու և ապահովելու համար: Սա ներառում է գործիքներ, ընթացակարգեր և մեթոդներ, որոնք ստեղծված են

ՄԿՈՒ համակարգերի որակը բարելավող ազգային մոտեցում ձևավորելու և Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի օգտագործումը զարգացնելու համար

որակի ապահովման գործընթացում ինքնագնահատման և մասնագիտական գնահատականի օգտագործման համար

Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակը[53] հաստատող հայտարարագրի հավելված 2-ի ցուցանիշի օգտագործումը զարգացնելու համար: Հայտերը պետք է ուղղված լինեն նշվածներից մեկին

ՄԿՈՒ Որակի ապահովման եվրոպական ցանցի նախկին նախագծերի արդյունքների, հատկապես ՄԿՈՒ որակի ապահովմանը նպաստող ուղեցույցեր մշակող թեմատիկ խմբերի արդյունքների փոխանցում, կիրառում և տարածում

Որակի ապահովման ընդհանուր շրջանակի իրականացրած նախկին նախագծերի արդյունքների փոխանցում և շահագործում ՄԿՈՒ որակի ապահովման մասնագիտական գնահատականի միջոցով[54]

ՄԿՈՒ որակի ապահովման ոլորտում Լեոնադո դա Վինչի նախագծերի շրջանակներում ստեղծված նորարար և համապատասխան նյութերի փոխանցում և կիրառում

Որակի ապահովման ընդհանուր շրջանակի կիրառմանն առնչվող նախկին, համապատասխան և նորարար նախագծերի արդյունքների թարմացում

Բոլոր դեպքերում նոր նախագծի համակարգողը պետք է կապի մեջ լինի ՄԿՈՒ-ում որակի ապահովման ընթացիկ ցանցի հետ և հետևի դրա վերջին աշխատանքներին եվրոպական մակարդակով ձեռնարկած գործողությունների հետ համաձայնություն պահպանելու համար:

3.3 Բազմակողմանի նախագծեր –Նորարարության զարգացում

Հիմնական տեղեկատվությունը տես 3.2 հատվածի ներածության տակ:

3.3.1 ՄԿՈՒԵԿ կիրառումը ուսման արդյունքների և որակավորումների թափանցիկության և ճանաչման համար

Գերակա նախագծերը Եվրախորհրդարանի և Խորհրդի ԵԿՄԿՈՒ համակարգերը[55] հաստատող հանձնարարագրի համաձայն նախագծերը պետք է աջակցեն ազգային և սեկտորային որակավորումների զարգացմանը ՄԿՈՒԵԿ–ի ներմուծման հաշվին:

---

[53] Եվրախորհրդարանի և Խորհրդի 2009թ հունիսի 18-ի Հանձնարարագիր Մասնագիտական կրթության և ուսուցման համար Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակ հիմնելու վերաբերյալ (2009/C 155/1):
http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2009:155:0001:0010:EN:PDF

[54] http://www.peer-review-education.net/index.php?class=Calimero_Webpage&id=14762

Եվրախորհրդարանի և Խորհրդի ՄԿՈՒԵԿ համակարգերը[55] հաստատող հանձնարարագրի համաձայն նախագծերը պետք է աջակցեն նաև ՄԿՈՒԵԿ-ի թեստավորմանն ու կիրառմանը և ուղղված լինել հետևյալ **բոլոր** կետերին

նախագծել և կիրառել ուսուցման արդյունքների որակավորումների կառուցվածքի գործառական և փոխանցելի մեթոդներ և ուղեցույցեր՝ ՄԿՈՒԵԿ տեխնիկական մասնագիտացումների վրա հիմնված ՄԿՈՒԵԿ կետերի տեղաբաշխմամբ

ուսուցման արդյունքների վրա հիմնված սեկտորային և միջսեկտորային որակավորումների միավորների փորձարկում, ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ համատեքստում ձեռքբերված ուսուցման արդյունքների գնահատման, փոխանցման վավերացման և կուտակման համար

որակի ազգային, սեկտորային և միջսեկտորային չափանիշների ստեղծում և փորձարկում, որի նպատակն է այդ որակավորումներին ՄԿՈՒԵԿ որակի ապրանքանիշի տրամադրումը

Ի հավելում վերը նշված գործողություններին, նախագծերը կարող են նաև ներառել

ՄԿՈՒ ծրագրերի ուսուցման արդյունքների վավերացման, փոխանցման և ճանաչման ճկուն միջոցների ստեղծում՝ օգտագործելով ՄԿՈՒԵԿ սկզբունքները

ՄԿՈՒԵԿ-ը և Եվրոպական կրեդիտների փոխանցման և կուտակման ծրագիրը միավորելու հայեցակարգերի զարգացում և ուսուցման արդյունքների հիմքում դրանց համատեղելիության ավելացում:

3.3.2 ՄԿՈՒ որակի ապահովման համակարգերի բարելավում

Գերակա նախագծերը նախատեսված են աջակցելու Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի[56] օգտագործմանն ու մշակմանը, ՄԿՈՒ համակարգերի բարելավմանը և զարգացմանը, ինչպես նաև բոլոր մակարդակներում որակի բարելավմանը և նորարարությունների մշակույթի խթանմանը: Նախագծերը պետք է ունենան հետևյալ նպատակներից մեկը

ազգային մակարդակով որակի ապահովման համակարգերի բարելավմանն ուղղված ազգային մոտեցումների և հատկապես կիրառման համար ուղեցույցերի և գործողությունների ծրագրի նախագծում, շրջանակի լավագույնս օգտագործում

Որակի ապահովման եվրոպական շրջանակի վերաբերյալ հանձնարարագրի Հավելված 2-ի ցուցանիշների տվյալների որոնման զարգացում

Որակի ապահովման եվրոպական շրջանակի վրա հիմնված կայուն և փոխանցելի, կիրառվող և կոնկրետ գործիքների զարգացում

---

[55] Եվրախորհրդարանի և Խորհրդի 2009թ հունիսի 18-ի Հանձնարարագիր Մասնագիտական կրթության և ուսուցման համար Եվրոպական կրեդիտային համակարգի հիմնադրման վերաբերյալ (2009/C 155/02): http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2009:155:0011:0018:EN:PDF

[56] Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակը տեղեկատվական համակարգ է, որը նպատակ ունի օգնել Անդամ նահանգներին և մասնակից երկրներին մշակել, բարելավել, վերահսկել և գնահատել իրենց սեփական համակարգերը և գործելակերպերը՝ հիմնվելով ընդհանուր սկզբունքների և չափանիշների վրա http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc1134_en.htm

Շրջանակին առնչվող և ՄԿՈՒ գործիչների՝ մասնավորապես ուսուցման մատակարարների կողմից օգտագործվող կոնկրետ ուղեցույցերի նախագծում

Շրջանակի վրա հիմնված նախնական և շարունակական մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման գործընթացների մշակում և փորձարկում

3.3.3 Մասնագիտական հմտությունների զարգացում՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները – Նոր հմտություններ նոր աշխատանքների համար

Գերակա նախագծերը պետք է աջակցեն աշխատանքային կյանքի հետ սերտ կապերին՝ ՄԿՈՒ-ն աշխատաշուկայի պահանջներին ավելի համապատասխան դարձնելու համար: Նախագծերը պետք է նպատակ ունենան բարելավել անհրաժեշտ հմտությունների և կարողությունների բացահայտումն ու կանխատեսումը և դրանք ինտեգրել ՄԿՈՒ: Սա ենթադրում է նաև խթանել ուսուցման ինտեգրումը գործարար աշխարհ: Այս գերակայությունը պետք է աջակցի «Նոր հմտություններ նոր աշխատանքների համար» ռազմավարության[57] իրականացմանը: Հայտերը պետք է ներառեն հետևյալը

տարբեր շահառուների ներգրավման խթանում ՄԿՈՒ-ն և որակավորման համակարգերը աշխատաշուկայի պահանջներին ավելի բավարարող դարձնելու համար՝ հաշվի առնելով համակարգային փոփոխությունները, ինչպիսին է անցումը ուսման արդյունքների և կարողությունների վրա հիմնված համակարգերի

հմտությունների կարիքների կանխատեսման համար ընդհանուր մեթոդների և համակարգերի մշակում և փորձարկում, ներառյալ սեկտորային մակարդակում, կազմակերպությունների (սեկտորային ընկերությունների) և հասարակական գործընկերների ներառումը ՄԿՈՒ-ում

ուսուցման և աշխատանքի առաջխաղացում և ինտեգրում: Հիմք ընդունելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտությունների զարգացումը՝ խթանել առավել նպաստավոր ուսումնական միջավայրը և ուսուցումը աշխատավայրում և ուսուցման ուղիները:

3.4 Ցանցային աշխատանքներ

3.4.1Համագործակցություն ՄԿՈՒ և գործարար աշխարհի միջև

Գերակա ցանցային աշխատանքները պետք է ներառեն ՄԿՈՒ շահառուներ (օրինակ ՄԿՈՒ դպրոցներ, հաստատություններ, կազմակերպություններ), ինչպես նաև շահառուներ գործարար աշխարհից (օրինակ ոլորտի ներկայացուցիչներ, մասնաճյուղեր, ձեռնարկություններ, հասարակական գործընկերներ): Այսպիսի ցանցերի նպատակը տեղեկատվության և փորձի փոխանակումն է, ինչպես նաև «Նոր հմտություններ նոր աշխատանքների համար» նախաձեռնությանը[58] կից ընդհանուր

[57] Ibid 3
[58] Ibid 3

մոտեցումների, մեթոդների և գործիքների տարածման և կիրառման աջակցությունը: Այն կարող է ներառել օրինակ մասնագիտական գնահատման, մեթոդների, գործիքների, մանկավարժական մոտեցումների անդրադարձ կամ ոլորտային հմտությունների պատրաստում: Կառուցվածքային փոփոխությունների ենթարկվող կամ արագ զարգացում ապրող ոլորտների ցանցային աշխատանքները հատկապես կխրախուսվեն:

3.4.2 ՄԿՈՒ շարժականության ռազմավարությունների մշակում

Ցանցերը պետք է աջակցեն մարզային/տեղական իշխանությունների, իրավասու մարմինների և գործարար աշխարհի միջև համագործակցությունը ՄԿՈՒ շարժականությունը ավելացնելու համար: Դրանք պետք է ուշադրություն դարձնեն ուսման շարժականության ոլորտում գաղափարների, ռազմավարությունների և կառուցվածքների բացահայտմանն ու տարածմանը, ոչ միայն ցանցի ներսում, այլև արտաքին շահագրգիռ կողմերին: Լայն տեսանելիություն և ազդեցություն ունենալու համար ցանցերը պետք է միավորեն համապատասխան շահառուների և երկրների:

4. ԳՐՈՒՆԴՏՎԻԳ –ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Քաղաքականության համատեքստ

Գրունդտվիգ ծրագրի նպատակն է պատասխանել մի կողմից դպրոցը վաղ տարիքում լքած մեծ թվով մեծահասակների (կամ ինչպես գաղթականների պարագայում երբևէ դպրոցական կրթություն ստանալու հնարավորություն չունեցած մարդկանց) և մյուս կողմից տարեց բնակչության կրկնակի կրթության մարտահրավերին: Մեծահասակների կրթությունը օգնում է լուծել այս մարտահրավերները՝ երկու կարգավիճակներին էլ հնարավարություն տալով բարելավել և թարմացնել իրենց գիտելիքները և կարողությունները: Մեծահասակների կրթությունը ցկյանս ուսումնառության կարևորագույն բաղադրիչներից է: Սակայն մեծահասակների մասնակցությունը կրթության և ուսուցման մեջ ոչ միայն սահմանափակ է, այլև՝ անհավասարակշիռ: Կրթական ցածր մակարդակ ունեցողները ամենաքիչ հավանականությունն ունեն մասնակցելու ուսուցմանը: Համեմատենք Անդամ երկրների ուսումնառությանը մասնակցով մեծահասակների ներքին շեմը, որը մինչև 2010թ համար ահմանված է 12.5%, 2020թ այն 15 % է, իսկ 2008թ միջին ցուցանիշը կազմում էր 9.5%, որը տարբեր երկրներում տատանվում էր 1.3-32%-ի միջակայքում:

Որպեսզի լուծում տրվի այս, ինչպես նաև Եվրոպայի առջև ծառացած այլ խնդիրներին, ինչպիսիք են ժաղավրդագրական փոփոխությունները, աշխարհի այլ շրջանների սրընթաց զարգացումը և սոցիալական բացառման հետ զուգակցված աղքատությունը, հանձնաժողովը 2006թ հրապարակեց «Մեծահասակների

կրթություն. երբեք ուշ չէ սովորել»[59] հաղորդագրությունը: Այն ընդգրկում է մեծահասակների կրթության կարևորությունը մեծահասակների աշխատունակության, աշխատանքային շուկայում շարժականության, հիմնական կարողությունների ձեռքբերման աջակցության հարցում, միաժամանակ խթանելով սոցիալական լայն ընդգրկվածություն ունեցող աշխատաշուկան և հասարակությունը:
2007թ սեպտեմբերին հաղորդագրությանը հետևեց Մեծահասակների կրթության գործողությունների պլանը[60], որը սահմանում էր, թե ինչպես անդամ երկրները և այլ շահառուներ եվրոպական աջակցությամբ կարող են մշակել մեծահասակների կրթության արդյունավետ համակարգեր: 2008 մայիսին Եվրախորհուրդը ընդունեց Մեծահասակների կրթության[61] մասին մի շարք որոշումներ, որոնք այս տարածքում ամրապնդում և զարգացնում են Հանձնաժողովի գործողությունների ռազմավարությունը:

Մեծահասակների կրթության մասնակցության աճը և անաչառ դարձնելը շատ կարևոր են: Պետք է բարձրացնել որակի մշակույթը, հատուկ ուշադրություն դարձնելով սովորողներին, աշխատակազմի մասնագիտական զարգացմանը, և տարածմանը: Մեծահասակներին մոտիվացնելու համար կարևոր է ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ճանաչման և վավերացման համակարգերի իրականացումը: Եվ վերջապես մեծահասակների կրթության որակը և համադրելիությունը, որպես ապագա քաղաքականության հիմք, բարելավման կարիք ունեն: Որակի բարելավումը և կրթության ու ուսուցման անաչառության խթանումը 2009[62] մայիսին 12-ին Խորհրդի որոշմամբ ընդունված «Կրթության և ուսուցման եվրոպական համագործակցության ռազմավարության շրջանակի» («ET 2020») գերակայություններն են:

Գրունդտվիգ ծրագրի առանձնահատուկ և գործառնական նպատակները

Ինչպես սահմանված է ծրագրի Որոշման 29.1 Հոդվածում, Գրունդտվիգ ծրագրի առանձնահատուկ նպատակները հետևյալն են
ա) արձագանքել Եվրոպայի տարեց բնակչության կրթական մարտահրավերներին
բ) օգնել մեծահասակներին ապահովել իրենց գիտելիքներն ու կարողությունները բարելավող միջոցներ:

Ինչպես սահմանված է ծրագրի Որոշման 29.2 Հոդվածում, Գրունդտվիգ ծրագրի գործառնական նպատակները հետևյալն են
ա) բարելավել մեծահասակների կրթության մասնակից անդամների շարժականության որակն ու մատչելիությունը Եվրոպայում, ինչպես նաև ավելացնել

[59] COM(2006) 614 final: http://eur-lex.europa.eu/LexUriServ/site/en/com/2006/com2006_0614en01.pdf
[60] COM(2007) 558 final: http://ec.europa.eu/education/policies/adult/com558_en.pdf
[61] Մեծահասակների կրթության Խորհրդի որոշում 2008թ Մայիսի 22-ի (2008/C 140/09): http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2008:140:0010:0013:EN:PDF
[62] Ibid 6

դրա ծավալը՝ մինչ 2013թ տարեկան առնվազն 7 000 նման անհատների շարժականությունը խթանելու համար
բ) բարձրացնել որակը և Եվրոպայում մեծահասակների կրթության մեջ ներգրավված կազմակերպությունների միջև համագործակցության ծավալները
գ) աջակցել խոցելի սոցիալական խմբերին, հատկապես՝ տարեց մարդկանց և առանց հիմնական որակավորումների դպրոցը լքածներին, նրանց մեծահասակների կրթություն ստանալու այլընտրանքային հմարավորություններ ընձեռելու համար
դ) հեշտացնել մեծահասակների կրթության նորարար գործելակերպերի զարգացումը և դրանք փոխանցումը մի երկրից մյուսը
ե) աջակցել նորարար ՏՀՏ վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և ցկյանս ուսումնառության գործելակերպերի զարգացմանը
զ) բարելավել մեծահասակների կրթական կազմակերպությունների կառավարումը և մանկավարժական մոտեցումները:

Գրունդտվիգ գործողությունների գերակայությունները

4.1 Շարժականություն և համագործակցություններ

Ինչ վերաբերում է Գրունդտվիգ ծրագրի ապակենտրոնացված գործողություններին, մասնավորապես շարժականությանը (անձնակազմի վերապատրաստումներ, այցեր և փոխանակումներ, սեմինարներ, կամավորական ծրագրեր, նախապատրաստական այցեր) և ուսումնական համագործակցություններին, պաշտոնական առաջնային թեմաներ չկան: Դիմողներին խորհուրդ է տրվում ուսումնասիրել իրենց երկրի Ազգային գործակալության կայքը, պարզելու համար, թե արդյոք կան որևէ ազգային առաջնայնություններ կամ այս գործողություններին վերաբերող ազգային այլ կանոններ:

Կրթական համագործակցությունը եվրոպական ծավալներն ամրապնդող և միջազգային փոխադարձ կապերի միջոցով մեծահասակների ուսումնական կազմակերպությունների որակը բարելավող համագործակցություն է:

Մեծահասակների շարժականությունը ֆինանսավորվում է ոչ ֆորմալ կրթության համագործակցության, Գրունդտվիգ ծրագրի, սեմինարների, կամավորական ծրագրերի կողմից:
Ինչպես սահմանված է ՑՈՒԾ Ուղեցույցի 2-րդ հատվածում, մեծահասակների կրթության ուսումնական անձնակազմի շարժականությունը ֆինանսավորվում է կրթական համագործակցությունների և «Այցեր և փոխանակումներ» դասընթացների մասնակցելու համար տրվող անհատական դրամաշնորհների միջոցով:

4.2 Բազմակողմանի նախագծեր

Բազմակողմանի նախագծերի շրջանակներում աջակցություն կցուցաբերվի այն նախագծերին, որոնք կկիսվեն փորձով և արդյունավետ գործելակերպով և ցույց կտան կոնկրետ և տարածման համար հարմար արդյունքներ **(մեթոդներ, գործիքներ, նյութեր, դասընթացներ)** հետևաբար զարգացնելով նորարարությունը և արդյունավետ գործելակերպը:

Առանձնահատուկ նախապատվություն կտրվի այն նախագծերին, որոնք նախատեսում են մեծահասակների կրթությամբ զբաղվող անձնակազմի գործնական ուսուցումներ:

Ներկայացված հայտերը իրենցից կներկայացնեն մեծահասակների կրթության մատչելի և փորձարկվող ուղիներ, համապատասխան մեթոդներ և մոտեցման քաղաքականություններ, որոնք մշակվել կամ մշակվում են եվրոպական մակարդակով ռազմավարության քաղաքականության շրջանակներում:

Սա ներառում է եվրոպական/ազգային որակավորումների շրջանակը[63], ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության վավերացման ուղենիշների[64], առանցքային հմտությունների եվրոպական շրջանակը[65], Europass[66], ՄԿՈՒԵԿ[67], Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակ[68], ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի Մեծահասակների կրթության գործողությունների ծրագրի[69] մաս կազմող մեծահասակների կրթության մասնագետների հիմնական հմտությունները:

4.2.1 Մեծահասակների կրթության միջոցով առանցքային հմտությունների ձեռքբերում

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել հիմնական հմտությունների վրա՝ որպես ավելի լայն առանցքային կարողություններ ձեռքբերելու հնարավորություն: Նախագծերը պետք է սևեռեն իրենց ուշադրությունը հետևյալի վրա

մեծահասակների համար ընդլայնել այնպիսի հիմնական հմտությունների ուսուցման մատչելիությունը, ինչպիսիք են գրագիտությունը, օտար լեզուներով հաղորդակցությունը, մաթեմատիկական կարողությունները, հիմնական գիտելիքներ գիտության և տեխնոլոգիաների ոլորտում, թվային, քաղաքացիական և ձեռնարկատիրական կարողություններ

---

[63] Եվրախորհրդարանի և Խորհրդի 2008թ ապրիլի 23 հանձնարարագիր 8կյանս ուսումնառության համար Որակավորումների եվրոպական շրջանակի հիմնման վերաբերյալ (2008/C 111): http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:2008:111:0001:0007:EN:PDF

[64] http://www.cedefop.europa.eu/EN/publications/5059.aspx

[65] http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc42_en.htm

[66] Եվրախորհրդարանի և Խորհրդի որոշում No. 2241/2004/EC որակավորումների և հմտությունների թափանցիկության համար մեկ համայնքի շրջանակի մասին (Europass) (2004/L 390/6): http://eurlex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2004:390:0006:0020:EN:PDF

[67] Ibid 55

[68] Ibid 53

[69] Ibid 60

երկրորդ հնարավորություն ընձեռել կրթություն ստանալ միջին տարիքի մարդկանց և նրանց (այդ թվում՝ միգրանտներին), ովքեր կարիք ունեն բարելավելու իրենց կրթական մակարդակը: Էմիգրանտների համար մշակել հյուրընկալ երկրի լեզվի դասավանդման և ուսուցման նորարար մոտեցումներ

ճանաչել կամավորական աշխատանքի, համայնքային և ընտանիքին առնչվող գործունեության միջոցով ձեռք բերված հմտությունները

օգտագործել աշխատատեղը իբրև նոր առանցքային հմտություններ ձեռքբերելու միջոց, մշակել ձեռնարկությունների անձնակազմի կրթական մակարդակը բարձրացնելու նորարար մոտեցումներ

բարելավել կրթության արդյունքների հիման վրա ստացած առանցքային հմտությունների գնահատումը, ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացումը ցածր որակավորում ունեցող անձանց համար

գնահատել Որակավորումների ազգային շրջանակի ազդեցությունը կրթական հնարավորությունների մատչելիության ավելացման վրա

4.2.2 Մեծահասակների կրթության դերը սոցիալական ներգրավվածության և գենդերային հավասարության ամրապնդման մեջ

Ավելացնել մեծահասակների կրթության գրավչությունը և մատչելիությունը հատկապես ցածր որակավորում ունեցող անձանց, անապահով և մեկուսացված քաղաքացիների և միգրանտների համար: Նախագծերը պետք է ուշադրություն դարձնեն հետևյալին

- դրդել անհատ սովորողներին մասնակցելու ուսուցմանը, այդ թվում՝ ուղղորդման ծառայության, իրազեկման ռազմավարության, տեղեկատվության բարձրացման քարոզչության, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման վավերացման, դասավանդման և ուսուցման համապատասխան մոտեցումների և ձեռնարկությունների հետ համագործակցությունների միջոցով
- օգտագործել ՏՀՏ, էլեկտրոնային ուսուցում և մեդիա մեծահասակների կրթության մատչելիությունը ընդլայնելու համար
- մշակել ուսման այլընտրանքային մոտեցումներ անապահով և մեկուսացված քաղաքացիներին հասարակություն և աշխատաշուկա ինտեգրելու կամ վերաինտեգրելու համար

խթանել գենդերային հավասարությունը մեծահասակների կրթության մեջ, մասնավորապես մշակելով գրավիչ մեթոդներ մեծահասակների կրթության ոլորտում տղամարդկանց մասնակցությունը խրախուսելու համար

4.2.3 Միջսերնդային կրթություն: Ուսուցում տարեցների համար: Ընտանեկան ուսուցում

Գերակա նախագծերը պետք է ուշադրություն սևեռեն հետևյալ ոլորտներին

տարեցների կրթության համար գիտելիքների, մեթոդների և լավ գործելակերպի փոխանցում

տարեցներին փոփոխություններին համընթաց քայլելու և հասարակության մեջ ակտիվ մնալու համար անհրաժեշտ հմտությունների ապահովում
տարեցների կողմից այլ մարդկանց կրթության մեջ ներդրման ամրապնդում
ներսերնդային և ընտանեկան կրթության նորարար մոտեցումների մշակում
տարեցների կամավորության՝ որպես ոչ ֆորմալ կրթության ձևի նորարար մոդելների մշակում (2011թ Կամավորության եվրոպական տարին է):

4.2.4 Մեծահասակների կրթության որակի ապահովում, ներառյալ անձնակազմի մասնագիտական զարգացումը

Գերակա նախագծերը պետք է ուշադրություն դարձնեն հետևյալ ոլորտներին
ուսուցիչների, դասընթացավարների և անձնակազմի այլ անդամների հմտությունների զարգացում, օրինակ՝ նախնական կամ գործնական ուսուցում, ուսուցման միջոցով համապատասխան որակավորումների զարգացում՝ անձնակազմի համար առանցքային հմտությունների կիրառման միջոցով[70]
մեծահասակների ուսուցչի մասնագիտության զարգացում, ներառյալ կարիերայի ուղիներ՝ մեծահասակների կրթության գործիչների համար
մեծահասակների կրթության ապահովման ծախսերի (և ներդրումների վերադարձի) վերլուծություն
ծառայությունների և հաստատությունների որակի ապահովման բարելավում, ներառյալ մասնագիտական ուսուցման[71], Որակի ապահովման եվրոպական հենքային շրջանակի և Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում[72] Որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների՝ մեծահասակների կրթության մեջ հնարավոր կիրառման ուսումնասիրություն
եվրոպական նորարար դասընթացների զարգացում գործնական ուսուցման համար և անձնակազմի զարգացման ոչ ֆորմալ մոտեցումների մշակում, ինչպիսին է աշխատանքային գործընթացին հետևելը
մեծահասակների կրթական անձնակազմի (ուսուցիչներ, դասընթացավարներ) որակավորումների բարձրացման համար վավերացման-սերտիֆիկացման համակարգերի զարգացում և բարելավում
մեծահասակների կրթության կազմակերպությունների կառավարման և կառուցվածքի բարելավում
մատակարարների չափանիշների և հավաստագրման մշակում

[70] http://ec.europa.eu/education/lifelong-learning-policy/doc58_en.htm
[71] Ibid 53
[72] http://www.eqar.eu/fileadmin/documents/e4/050221_ENQA_report.pdf

4.3 Ցանցային աշխատանքներ

4.3.1 Սոցիալական համախմբվածության խթանում սոցիալական հատուկ խմբերի մեծահասակներին որակյալ կրթության հնարավորություն տալու միջոցով

Գերակա ցանցային աշխատանքները պետք է ուշադրությունը սևեռեն սոցիալական ներգրավվածությունը խթանող այնպիսի թիրախային խմբերի և թեմաների վրա, ինչպիսիք են

Միգրանտները և ազգային փոքրամասնությունները, պետք է հատուկ ուշադրություն դարձնել նրանց համապատասխան դասընթացների սխեմաներ մշակելու վրա, որը կներառի հյուրընկալ երկրի լեզվի ուսանումը

բանտարկյալները և նախկին իրավախախտները (սա հատկապես պետք է հիմնված լինի 2010թ Բուդապեշտում անցկացված բանտային կրթությանը վերաբերող եվրոպական համաժողովի ստեղծած աշխատանքային խմբերի արդյունքների վրա)

տարեց մարդիկ (շեշտը դնելով միջսերնդային կրթության վրա)

տարեցների համար լեզուների ուսուցման բացթողումներին ուղղված ռազմավարությունների մշակումը

հատուկ կարիքներով տարեցների կրթության զարգացում, մասնավորապես հաշմանդամ մարդկանց կրթություն (այս ցանցային աշխատանքները պետք է ուղղված լինեն այնպիսի ոլորտներին, ինչպիսին է այս թիրախային խմբի համար հեռակա ուսուցումը, մեդիայի դերը հատուկ կարիքավորների կրթությանը աջակցելու հարցում, իրազեկման բարձրացում, ընտանեկան կրթություն հաշմանդամության համատեքստում)

Այսպիսի ցանցային աշխատանքները պետք է ներառեն նաև մարդկանց, որոնց գիտելիքները կրթական տվյալ ոլորտից չեն, սակայն նրանք ունեն գերազանց գիտելիքներ համապատասխան ոլորտներում:

ԳԼՈՒԽ 2 – ԲԱԶՄԱՃՅՈՒՂ ԾՐԱԳՐԵՐ

Քաղաքականության համառոտագիր

Բազմաճյուղ ծրագիրը աջակցում է կրթության և ուսուցման եվրոպական քաղաքականության բազմաճյուղ ոլորտների իրականացմանը, ինչպես սահմանված է կրթության և ուսուցման եվրոպական համագործակցության ET 2020[73] ռազմավարական շրջանակում: Այն ներառում է նաև ցկյանս ուսումնառության ռազմավարությունների և որակավորումների շրջանակ, ինչպես նաև ավելի շատ շարժունակ ուսանողների կրթական ուղիներ ստեղծելու չափորոշիչներ մշակելու միջոցով ցկյանս ուսումնառությունը իրականություն դարձնելը:

Բազմաճյուղ ծրագրի հատուկ և գործառնական նպատակները

[73] Ibid 4

Բազմաճյուղ ծրագրի հատուկ նպատակները, ինչպես նշված է ծրագրի մասին Որոշման Հոդված 32.1-ում, հետևյալն են
ա) խթանել եվրոպական համագործակցությունը այն ոլորտներում, որոնք պարունակում են երկու կամ ավելի սեկտորային ենթածրագրեր
ա) խթանել Անդամ երկրների կրթության և ուսուցման համակարգերի որակն ու թափանցիկությունը
Ինչպես սահմանված է ծրագրի մասին Որոշման Հոդված 32.2-ում, բազմաճյուղ ծրագրի գործառնական նպատակները հետևյալն են
ա) աջակցել ցկյանս ուսումնառության քաղաքականության զարգացմանը և եվրոպական մակարդակով համագործակցությանը, մասնավորապես՝
Լիսաբոնյան գործընթացի և Կրթության և ուսուցման 2010թ աշխատանքային ծրագրի, ինչպես նաև Բոլոնիայի և Կոպենհագենյան գործընթացների և նրանց հաջորդների համատեքստում
բ) ապահովել համապատասխան համեմատելի տվյալներ, վիճակագրություն և վերլուծություն՝ ցկյանս ուսումնառության քաղաքականության զարգացումն ամրապնդելու համար, ինչպես նաև վերահսկել ցկյանս ուսումնառության նպատակների և թիրախների առաջընթացը և սահմանել հատուկ ուշադրության ոլորտները
գ) խթանել լեզուների ուսուցումը և աջակցել Անդամ երկրներում լեզվական բազմազանությունը
d) աջակցել նորարար ՏՀՏ-ի վրա հիմնված միջոցների, ծառայությունների, մանկավարժության և գործելակերպի զարգացումը
e) համոզվել, որ ցկյանս ուսումնառության ծրագրի արդյունքները պատշաճ կերպով ճանաչված են, ցուցադրված և իրականացված:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 1 – ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնական գործունեություն 1-ի գործողությունների գերակայություններ

1.1 Կրթական և մասնագիտական ուսուցման մասնագետների և որոշումներ կայացնողների համար ուսուցողական այցեր
(Շարժականություն)

Այս գործողությունը կենտրոնացած է ԵՄ մակարդակով ուսուցման մշակույթը խթանելու՝ ուսումնասիրման, փոխանակման և ընդհանուր հետաքրքրությունների փորձի փոխադարձ ուսման վրա:
Այն խրախուսում է հարակից թեմաների քննարկումը և կրթության ու ուսուցման համակարգերի թափանցիկության և մոտեցումների որակի զարգացումը: Հատուկ ուշադրություն կդարձվի քաղաքականություն մշակողների և որոշումներ կայացնողների մասնակցությունը ավելացնելու վրա:
2011թ ուսումնական այցերի գերակայությունները կքննարկվեն գլուխ 3–ի ընդհանուր գերակայությունների հետ:
1. Խրախուսել կրթության, ուսուցման և աշխատանքի միջև համագործակցությունը
2. Աջակցել ուսուցիչների, դասընթացավարների և կրթական ու ուսմնական հաստատությունների ղեկավարների նախնական և շարունակական ուսուցումը
3. Խրախուսել կրթության և ուսուցման համակարգերի միջոցով առանցքային հմտությունների ձեռքբերումը
4. Կրթության և ուսուցման մեջ առաջխաղացնել սոցիալական ներգրավվածությունը և գենդերային հավասարությունը, այդ թվում՝ միգրանտների ներգրավումը
5. Մշակել ցկյանս ուսումնառության և շարժականության ռազմավարություններ:

1.2 Ուսումնասիրություններ և համեմատական հետազոտություն

Այս գործունեության նպատակներն են հասնել ԵՄ-ում կրթական համակարգերի միջազգային համեմատական վերլուծության զարգացմանը՝ տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակով նորարարությունների ոլորտում: Վերլուծությունը պետք է հիմնված լինի համեմատական տվյալների, վիճակագրության և գիտելիքի վրա՝ ցկյանս ուսումնառության ռազմավարությունների և քաղաքականության զարգացման ամրապնդման և հատուկ ուշադրության ռազմավարական ոլորտների ճանաչման համար:
Առաջնայնությունը կտրվի այն ուսումնասիրություններին և հետազոտություններին, որոնք ապահովում են ոլորտում արդիական գիտելիքների դերի բարձրացմանը և որոնք ուշադրություն են հատկացնում այն թեմաներին, որոնց այս գործողության ներկա և սպասվող ուսումնասիրությունների շրջանակներում անդրադարձ չի կատարվել: Մինչ հայտ ներկայացնելը դիմողը պետք է համոզվի, որ առաջադրվող թեմաներին ԵՄ կրթական ծրագրերի[74] կողմից ֆինանսավորված այլ

[74] Նախորդ տարիների ուսումնասիրությունները կարող եք գտնել այստեղ http://eacea.ec.europa.eu/llp/general_information/key_activity_1_en.html#links . Կրթությանն ու ուսուցմանը վերաբերող Կրթության և մշակույթի Գլխավոր տնօրինության կողմից ֆինանսավորված ուսումնասիրությունները և զեկույցները կարող եք գտնել այստեղ http://ec.europa.eu/education/more-information/moreinformation139_en.htm . Կրթության, ուսուցման և երիտասարդներին վերաբերող մրցույթների հայտարարությունները հասանելի են այստեղ http://ec.europa.eu/dgs/education_culture/calls/tenders_en.html և http://eacea.ec.europa.eu/llp/ka1/studies_comparative_research_en.php Ընտրության արդյունքները հրապարակված են այստեղ

ուսումնասիրություններում անդրադարձ չի կատարվել և հետագայում էլ չի կատարվի:
Կրթության և ուսուցման մեջ քաղաքականության և գործելակերպի համար փաստարկված հիմքերի ամրապնդման համեմատական հետազոտության գերակա թեմաները հետևյալն են

1.2.1 Մեծահասակների կրթության ապահովում և պահանջարկ

Ուսումնասիրությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն մեծահասակների բարձրորակ և արդյունավետ կրթության համակարգերի (ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ) համար ստեղծված կազմակերպչական, կառավարական և ֆինանսավորման մոդելների համեմատական կամ խորացված վերլուծության վրա: Դրանք ապահովում են մեծահասակների ողջ կյանքում ստացվող որակավորումների հստակ ուղիներ:

1.2.2 Ցկյանս ուսումնառության ընթացքում կրթության և ուսուցման առանցքային հմտությունների ձեռքբերում

Ուսումնասիրությունները պետք է ուշադրությունը սևեռեն հետևյալի վրա
ա) **գրագիտության, մաթեմատիկայի և գիտության ոլորտներում նվաճումների, գենդերային հավասարության և ընդհանուր կարողությունների (սովորել սովորելու համար և ստեղծարար հմտություններ) ավելացման միջոցներ**
բ) առանցքային հմտությունների գնահատման չափորոշիչներ և մեթոդաբանություն

1.2.3 Սոցիալական ներգրավվածությունը կրթության և ուսուցման մեջ, ներառայալ միգրանտների ինտեգրումը

Ուսումնասիրությունները պետք է հատկապես ուշադրություն դարձնեն հետևյալին
ա) **կրթությունը և ուսուցումը վաղ լքելու կրճատման միջոցների արդյունավետություն**
բ) **վաղ մանկության կրթության և խնամքի դերը սոցիալական ներգրավվածության մեջ (մասնակցություն, մանկավարժական մոտեցումներ և այլն)**
գ) **խոցելի խմբերի (սոցիալական, տնտեսական, էթնիկ…) բարձրագույն կրթության մասնակցության ավելացման միջոցներ**
դ) **մեծահասակների կրթության դերը սոցիալական խտրականության և բացառման դեմ պայքարում**

---

http://eacea.ec.europa.eu/llp/results_projects/selection_results_en.php և Eurydice-ի կողմից արված ուսումնասիրությունները կարող եք գտնել այստեղ http://www.eurydice.org

1.2.4 Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) գրավչությունը

Ուսումնասիրությունները պետք է իրենց ուշադրությունը սևեռեն հատկապես հետևյալին

ա) ՄԿՈՒ երրորդային ծրագրերին վերաբերող նախաձեռնությունների համեմատական վերլուծություն

բ) ՄԿՈՒ նախնական և շարունակական ծրագրերի որակի գործոնների համեմատական վերլուծություն, որոնք ՄԿՈՒ պատկերի էական փոփոխության վրա ազդեցություն ունեն:

1.2.5 Լիազորությունների չափում և հետագա հմտությունների ապահովում

Տնտեսության և հասարակության համար անհրաժեշտ ապագա հմտությունների համեմատական վերլուծություն, կրթական և ուսումնական համակարգերի պահանջները բավարարում, կրթության և աշխատաշուկայի միջև համագործակցության որակ, պարտադիր կրթության, լրացուցիչ, բարձրագույն, մեծահասակների կրթության և գործարար աշխարհի միջև կապերի բարելվում:

1.3 Ցանցային աշխատանքներ

Այս գործուղության նպատակը ընդհանուր ցանցային կապերի ստեղծումն է, որոնք խթանում են փոխադարձ քաղաքականության ուսուցումը և տեղեկատվության ու ցկյանս ուսումնառության նորարար մոտեցումների զարգացման և կիրառան լավագույն փորձի փոխանակումը:

Այսպիսի ցանցային աշխատանքները պետք է միավորեն քաղաքականության ստեղծման և կիրառման (ազգային, տարածաշրջանային, տեղական) բոլոր սեկտորների և մակարդակների համապատասխան դերակատարներին և նորարարության և լավագույն փորձի խթանման եվրոպական համագործակցության միացյալ հարթակ ապահովեն:

1.3.1 Ցկյանս ուսումնառության ռազմավարությունների առաջխաղացում՝ ներառյալ կրթության ու ուսուցման տարբեր ոլորտների միջև ուղիները

Աջակցել ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակով նորարար կրթական քաղաքականության դրույթների մշակումն ու իրականացումը, մասնավորապես՝ մշակել ցկյանս ուսումնառության հնարավորություններ և ուղիներ, որոնք ուսանողակենտրոն են, ճկուն և ոչ փակուղային՝ կիրառելով գործնական գործիքներ անձնական զարգացման, աշխատունակության և բոլոր խմբերի քաղաքացիների սոցիալական ներգրավվածության հասնելու նպատակով և հիմնականում հետևյալ միջոցներով

ազգային որակավորումների շրջանակներ և համակարգեր ուսուցումը գնահատելու համար

նախնական և փորձառական ուսուցման վավերացման սխեմաներ (ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը

ողջ կյանքի ընթացքում բարձրորակ ուղղորդում և խորհրդատվություն ապահովող մատչելի ծառայություններ

կրթությունն ավելի գրավիչ դարձնելու այլ չոփորոշիչներ և սովորողների մոտիվացիայի խրախուսում (օրինակ՝ ֆինանսական աջակցության միջոցով)

մասնակիցների ծավալը ընդլայնող գործողություններ և կրթական նվաճումների որակի բարձրացում, անդրադառնալով ոչ ավանդական միջոցով սովորողների և անապահով խմբերի առանձնահատուկ կարիքներին

ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական և ուսումնական սեկտորների, գործարար, կամավորական և համայնքային դերակատարների տարածաշրջանային և տեղական մակարդակներով համագործակցություններ, որոնք կապված են զբաղվածության և սոցիալական ներգրավվածության նախաձեռնությունների հետ:

տարածաշրջանների միջև համագործակցություն ցկյանս ուսումնառության ռազմավարությունների մշակման և իրականացման նպատակով:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 2 – ԼԵԶՈՒՆԵՐ

Քաղաքականության համատեքստ

Եվրոպայում լեզվական բազմազանությունը կյանքի անբաժանելի մի մասն է: Այդ պատճառով լեզվական հմտությունները շատ կարևոր են եվրոպական քաղաքացիությունը ամրապնդելու, միջմշակութային երկխոսությունը խթանելու, սոցիալական ներգրավվածությունն ամրապնդելու և անձնական զարգացման համար: Դրանք հնարավորություն են ստեղծում հայտնաբերել այլ արժեքներ, համոզմունքներ և վարքագծեր: Կրթության և ուսուցման ոլորտում եվրոպական համագործակցության թարմացված Ռազմավարական շրջանակում ("ET 2020") լեզուների ուսանման ընդլայնումը դիտվում է որպես Անդամ երկրներում կրթության և ուսուցման որակի և արդյունավետության բարելավման գերակայություն: Լեզվական հմտությունները էական են նաև եվրոպական քաղաքացիների շարժականության և բիզնեսի համար: Լեզվական և միջմշակութային գործնական կարողությունները կարևոր դեր են խաղում տնտեսական աճի և առավել լավ աշխատատեղերի համար, քանի որ դրանք բարձրացնում են աշխատունակությունը և օգնում են եվրոպական ձեռնարկությունների մրցունակությանը գլոբալ շուկայում:

Լեզուների ուսուցման և լեզվական բազմազանության խթանումը ամբողջ ծրագրի, և մասնավորապես Կոմենիուս, Էրասմուս, Գրունդտվիգ և Լեոնարդո դա Վինչի ծրագրերի նպատակն է: «Լեզուներ» հիմնական գործունեությունը համալրում է այս սեկտորային ծրագրերը՝ լեզուների ուսուցման անհրաժեշտությունը հասցեագրելով

այդ սեկտորներից 2-ին կամ ավելիին: Ծրագրի համար բոլոր լեզուները նախընտրելի են:

Հիմնական գործունեություն 2 գործողությունների գերակայություններ

2.1 Բազմակողմանի ծրագրեր

Այս բազմաճյուղ ծրագրերը պետք է լրացնեն նախորդ ՑՈՒԾ սեկտորային 4 ծրագրերից առնվազն 2-ը: Դրանք պետք է իրենց ուշադրությունը սևեռեն լեզուների ուսուցանման առավելությունների և ԵՄ-ի բազմալեզու բնույթի մասին տեղեկատվության տարածման վրա, ինչպես նաև լեզուների ուսանման ռեսուրսների մատչելիության, լեզուների ուսուցողական նյութերի և լեզուների ստուգման գործիքների զարգացման և տարածման վրա: Անհրաժեշտության դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել Եվրախորհրդի Լեզուների ընդհանուր եվրոպական շրջանակը[75]:

2.1.1 Համագործակցություն կրթության, ուսուցման և գործարար աշխարհի միջև

Ծրագրերի նպատակն է աշխատանքին համապատասխան լեզվական հմտությունների ամրապնդումը՝ աշխատունակության բարելավման, ձեռնարկություններում անհատների ինտեգրման և եվրոպական մրցունակությունն ավելացնելու համար:

2.1.2 Քիչ գործածվող եվրոպական լեզուների տիրապետման խթանում և ամրապնդում

Ծրագրերը նպատակաուղղված կլինեն քիչ օգտագործվող եվրոպական լեզուների կենսունակության պահպանմանն ու ավելացմանը: Նման լեզուներց են ԵՄ անդամ փոքր երկրների լեզուները՝ հատկապես գրական, լրագրողական, հեռուստառադիոհեռարձակման և խոսակցական ոլորտներում:

2.1.3 Կրթության և ուսուցման համակարգերի միջոցով առանցքային հմտությունների ձեռքբերման խթանում

Նախագծերը կմշակեն մեթոդներ, որոնք հնարավորություններ կստեղծեն ծրագրին մասնակից երկրի բնակիչներին սովորել հյուրընկալ երկրների լեզուները լեզվի հիմնավոր ուսուցման միջոցով: Ծրագրերը պետք է ուղղված լինեն տարբեր կրթական և ուսումնական սեկտորների սովորողների կարիքներին և պետք է ներառեն տնային ուսուցման մեթոդներ ու Լեզուների ընդհանուր եվրոպական շրջանակի վրա հիմնված լեզվի կարճ (առավելագույնը 3 շաբաթ) սերտիֆիկացված դասընթացներ:

[75] http://www.coe.int/T/DG4/Linguistic/CADRE_EN.asp

Դրանք կարող են ներառել նաև մեթոդաբանություններ, որոնք կիրառում են նոր մեդիայի ընձեռած նորագույն հնարավորությունները և տեխնոլոգիաների ուսուցումը, որը ավելացնում է իրական շփումը և թիրախային լեզվի ուսուցումը բնիկների հետ (օրինակ մշակելով eTwinning –ի մոդելներ, տարբեր սեկտորների հետ համատեղ ուսուցում կամ սոցիալական մեդիայի գործիքների տարբեր հնարավորությունների օգտագործում):

2.1.4 Կրթության մեջ սոցիալական ներգրավվածության և գենդերային հավասարության ամրապնդում՝ ներառյալ միգրանտների ինտեգրումը

Նախաձերը կմշակեն լեզվի ուսանման նորարար մեթոդներ՝ հնարավորություն տալով էմիգրանտներին սովորել հյուրընկալ երկրի լեզուն:

2.1.5 Հարևան երկրների լեզուների ուսուցման խթանում

Հարևան երկրների միջև ծրագրերը համատեղ գործողությունների շնորհիվ կմշակեն համապատասխան լեզուների փոխադարձ ուսման հարավորություն ապահավող գործիքներ:

2.2 Ցանցային աշխատանքներ

Այս բազմաշերտ ցանցային աշխատանքը նպաստում է Եվրոպայում լեզուների զարգացման մեթոդներին: Դրանք խթանում են լեզուների ուսուցումը և լեզվական բազմազանությունը, աջակցում են նորարարական տեխնիկայի և լավ
փորձի մասին տեղեկատվության փոխանակմանը՝ հատկապես որոշում ընդունողների և հիմնական կրթական մասնագետների միջև, ինչպես նաև փոխանցում են նախկին նախագծերի արդյունքները պոտենցիալ վերջնական օգտագործողներին (հասարակական իշխանություններ, բիզնես, լեզու սովորողներ և այլն):

2.2.1 Կրթության մեջ սոցիալական ներգրավվածության և գենդերային հավասարության ամրապնդում՝ ներառյալ միգրանտների ինտեգրումը

Ցանցային աշխատանքները կնպաստեն փորձի փոխանակմանը, հնարավորություն տալով էմիգրանտներին սովորել հյուրընկալ երկրի լեզուն: Դրանք կխթանեն լեզվի ուսուցման արդյունավետ գործելակերպը և նպատակաուղղված կլինեն քաղաքացիական ներգրավվածությանը, ինչպես համայնքների միջնորդությանը և խորհրդատվությանը, իրավաբանական թարգմանություններին, առողջապահությանը և քաղաքացիական ծառայություններին առնչվող գործողություններին:

2.2.2 Ուսուցում և համագործակցություն գրական թարգմանության ոլորտում

Ցանցային աշխատանքները կխթանեն գրական թարգմանիչների հարթակի ստեղծումը համացանցում կամ հաղորդակցման ավանդական գործիքների միջոցով: Այդպիսի հարթակները պետք է նպատակաուղղված լինեն թարգմանիչների աշխատանքի որակի բարելավմանը՝ աջակցելով բարձրագույն կրթության և մասնագիտական ուսուցման հաստատությունների միջև համագործակցությունների ստեղծմանը: Բացի այդ դրանք պետք է թարգմանիչներին փորձի և տեղեկատվության փոխանակման և հեղինակների հետ մասնագիտական կապերի զարգացման հնարավորություն տան:

2.2.3 Եվրոպական լեզուների ապրանքանիշի ծրագրերի արդյունքների տարածում և նրանց միջև ցանցային աշխատանքների խթանում

Ցանցային աշխատանքները կկազմակերպեն և կաջակցեն առաջադրված նախագծերի արդյունքների տարածման միջոցառումներ և գործողություններ, մասնավորապես որոշ առաջադրված նախագծերի համատեղ հրապարակման նախաձեռնություններ: Դրանք կաջակցեն նախագծերի միավորմանն ու փորձի փոխանակմանը:

2.2.4 Հարևան երկրների լեզուների ուսուցման խթանում

Ցանցային աշխատանքները կխրախուսեն հաստատությունների և կազմակերպությունների միջև աշխատանքն ու փոխանակումները երկկողմանի կամ միջսահմանային համաձայնությունների և նախաձեռնությունների հաշվին: Դրանք կտարածեն նախաձեռնությունների տեղեկատվություն և լավ փորձ՝ բարձրացնելով հարևան երկրների լեզուների իմացությունը:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 3 – ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ՝ ՏՀՏ

Քաղաքականության համատեքստ

Կրթության մեջ ՏՀՏ-ի խթանումը ընդհանուր ծրագրի և մասնավորապես Կոմենիուս, Էրասմուս և Գրունդտվիգ ծրագրերի նպատակն է: “ՏՀՏ” Հիմնական գործունեությունը լրացնում է վերոնշյալ ծրագրերը՝ ներկայացնելով ՏՀՏ-ն որպես կրթական պահանջ այդ սեկտորներից երկուսում կամ ավելիում: Այն կենտրոնացված է ՏՀՏ հնարավորությունների վրա՝ որպես սոցիալական և կրթական նորարարության և փոփոխության կատալիզատորի:

Այն վերաբերում է ոչ թե տեխնոլոգիային, այլ նրան, թե ինչպես կարող է ուսուցումը բարելավվել ՏՀՏ-ի միջոցով (օրինակ՝ ուսուցման մոտեցումների և մանկավարժության նորարարություններ, ուսումնառությունից դուրս մնացած մարդկանց ներգրավվում,

ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության հնարավորությունների ներմուծում, ճկուն ցկյանս ուսումնառություն՝ թվային բացը և սոցիալ-տնտեսական բաժանումը լրացնելու համար): Կրթության ոլորտում ՏՀՏ-ի առնչությամբ էական առաջընթացն Անդամ երկրներում նկատելի դարձավ Լիսաբոնի ռազմավարության մեկնարկից հետո: Գրեթե բոլոր կրթական և ուսումնական հաստատությունները զինված են և ցանցային աշխատանքներ են կատարում ՏՀՏ-ի միջոցով: Այդուհանդերձ, շատ ավելին է պետք անել, որպեսզի օգտագործվի ՏՀՏ-ի ողջ հնարավորությունը՝ մանկավարժական նորարար զարգացումներին նպաստելու, ցկյանս ուսումնառության համընդհանուր մատչելիության և առանցքային կարողությունների ձեռքբերման համար: Սա առավելագույնի կհասցնի
ՏՀՏ-ի նախկին ներդրումների օգուտը:

Հիմնական գործունեություն 3-ի գործողությունների գերակայություններ:

3.1 Բազմակողմանի ծրագրեր

3.1.1 Բազմաճյուղ հմտությունների ամրապնդում, ինպիսիք են թվային հմտությունները, որոնք կապում են կրթական ու աշխատանքային ոլորտները

Շատ անհրաժեշտ են նոր հմտությունները, որոնք կրթությունն ու ուսուցումը ավելի համապատասխան կդարձնեն հասարակության կարիքներին, քաղաքացիներին ավելի լավ կզինեն 21-րդ դարում ցկյանս ուսումնառության համար անհրաժեշտ առանցքային կարողություններով: Այս կարողություններից շատերը բազմաճյուղ են, վերաբերում են տարբեր ոլորտներին, և ՏՀՏ-ն կարող է օգնել զարգացնել դրանք:

Բազմաճյուղ կարողությունների խթանումը պահանջում է ակտիվ ուսուցման վրա հիմնված դասավանդման և ուսումնառության նոր մոտեցումներ և ռազմավարություններ, ինչպիսիք են համագործակցական ուսուցումը, փոխադարձ ուսուցումը համայնքներում, խնդիրների ստեղծագործ լուծումներ, հայտնաբերում, սովորել գործելու միջոցով, փորձառական ուսուցում, քննադատական մտածողություն և ստողծարարություն: Թվային հմտությունը կյանքի և աշխատունակության համար անհրաժեշտ առանցքային հմտություններից մեկն է: Ինչ վերաբերում է կրությանը, հարցը ոչ թե տեխնոլոգիաներ կիրառելու կամ չկիրառելու մեջ է, այլ նրա, թե ինչպես, որտեղ և ինչի համար պետք է դրանք կիրառել: Ուստի պետք է ուշադրություն դարձնել մանկավարժական աջակցության, կրթական հնարավորությունների և գնահատման մոտեցումների վրա, որոնք կխթանեն թվային և այլ բազմաճյուղ կարողությունների ձեռքբերումը: Անհրաժեշտ է ավելի լավ հասկանալ և աջակցել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման միջոցով թվային կարողությունների ուսուցումը՝ սա միացնելով կրթության ֆորմալ հնարավորությունների հետ (օրակարգ, ուսուցման արդյունքներ) որպես ցկյանս ուսումնառության և հմտությունների քաղաքականության ներդրում:

3.1.2 Նորարարական մանկավարժություն և ուսուցման բազմակողմանի ուղիների գնահատման մեթոդներ

Մեր օրերում կրթությունն այլևս գծային չէ և անհատներն իրենց կյանքի ընթացքում հետևում եմ ուսուցման խառը ուղիների, որոնք ապահովում են ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները և համացանցում առկա ռեսուրսները:

Այնուամենայնիվ կրթական այդպիսի ուղիները հսկայական մարտահրավեր են հանդիսանում ավանդական ուսումնական ծրագրի, գնահատման, կրթության արդյունքների և ճանաչման մեխանիզմների համար:

Նախագծերը պետք է մշակեն և վերլուծեն մանկավարժական և գնահատման նորարար մոտեցումներ և այս բազմազան կրթական ուղիներին աջակցող մեթոդներ, որպեսզի օգնեն սովորողներին կրթության և աշխատանքի ավելի արդյունավետ կապեր հաստատել: Նախագծերը պետք է օգնեն նաև կազմակերպություններին և սովորողներին ավելի լավ գնահատել կրթության բոլոր տեսակի արդյունքները և կրթության ապագա կարիքները: Այս նոր մեթոդները և մոտեցումները պետք է նպաստեն ցկյանս ուսումնառության և հմտությունների քաղաքականության կիրառմանը:

Գերակա նախագծերը պետք է ներառեն հետևյալը

- առցանց ուսուցման համայնքների օգտագործում այնպիսի հմտությունների զարգացման համար, ինչպիսիք են սովորելը սովորելու համար, ձեռներեցությունը, համագործակցությունը, աշխատանքը տարբեր մշակույթների հետ, ինքնավարությունը և այլն
- վերլուծել, թե ինչպես կարող են թվային հմտությունները ավելի լավ ինտեգրվել ուսումնական ծրագրի և կրթության արդյունքների մեջ ոչ միայն ֆորմալ կրթության մակարդակում, այլև ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մակարդակներում
- աջակցել ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը աշխատավայրում՝ իբրև ֆորմալ կրթության/ուսուցման դասընթացի լրացում
- օգտագործել ՏՀՏ-ն ուսման ուղիների բազմազանացման և անհատականացման համար, որոնք հատում են ավանդական կրթական սեկտորները և ինֆորմալ ուսուցման իրավիճակները
- օգտագործել ՏՀՏ-ի վրա հիմնված սոցիալական ցանցային աշխատանքների գործիքները և հարթակները կրթությունից դուրս մնալու վտանգի տակ եղած մարդկանց (դպրոցից վաղ հասակում հեռացած մարդկանց, էթնիկ փոքրամասնություններին, էմիգրանտներին, տարեց մարդկանց և այլն) վերագրավելու համար և նրանց առաջարկել միանալ հասարակական ծառայություններին, ուսմանը և քաղաքացիական ներգրավվածությանը
- ուսումնասիրել լավագույն գործելակերպերը և ամրապնդել վիրտուալ շարժականությունը՝ կապելով կրթական և աշխատանքային ոլորտները և հաշվի առնել ուսուցման ոչ ավանդական ուղիները

փորձարկել գնահատման նոր ձևավորվող և ամփոփիչ մոտեցումները, որոնք խրախուսում են առցանց համագործակցային ուսուցումը, փոխադարձ ուսուցումը, ինքնուրույն ուսուցումը, վիրտուալ շարժականությունը և պարունակում են անհատական ուսուցման բազմաթիվ ուղիներ:

3.2 Ցանցային աշխատանքներ

3.2.1 Եվրոպայի շահառուների համայնքների կողմից թվային հմտությունների և աշխատունակության ու կյանքի համար կարևոր այլ կարողությունների խթանում

Թեմաները ներառում են

գիտելիքների և լավ գործելակերպի փոխանակում, ռազմավարական նոր համագործակցությունների մշակում՝ ներառելով ՏՀՏ-ի ապահոված կրթական ոլորտում առկա դերակատարներին՝ ընդգրկելով և՛ պահանջող, և՛ ապահովող կողմերին (օրինակ՝ հրատարակողները, ադ-հոք ծավալներ ընդլայնողները, բիզնես, հետազոտություն, քաղաքականություն ստեղծողները և կրթական դերակատարները, ինչպիսիք են սովորողները)

խորհրդատվության և աջակցության տրամադրում այն բազմաշերտ խնդիրներին, որոնք վերաբերում են ֆորմալ, ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթական միջոցների ծառայությունների թվայնացված մասին, ինչպիսիք են IPR-ին վերաբերող որակի չափորոշիչները, e-գնահատումը և e-պորտֆոլիոները

ապագա պատկերացումների, կանխատեսման սցենարների և ՏՀՏ-ի փոփոխված բնույթի և դերի բարձրացման մասին երաշխավորագրերի մշակում կրթական և ուսումնական համակարգերի՝ դեպի գիտելիքների ապագա հասարակության կարիքների փոփոխման համար

3.2.2 Համաեվրոպական շահառուների համայնքները պայքարում են սոցիալ-տնտեսական թվային բաժանման դեմ

Թեմաները ներառում են

եզրակացությունների վերլուծություն, ամրապնդում և տարածում թե ինչպես կարող են թվային հմտությունները օգնել դուրս մնալու ռիսկային խմբում գտնվող մարդկանց և բարձրացնել նրանց ինքնագնահատականը, ինքնավստահությունը, ինքնավարությունը և կրկին ուսման մեջ ներգրավելու մոտիվացիան: Շեշտը դնել ռիսկային խմբերի վերլուծության և թեմատիկ նյութերի հավաքագրման և ուսուցման նոր ուղիների վրա:

գիտելիքների և լավ գործելակերպի փոխանակում, ռազմավարական նոր համագործակցությունների մշակում՝ ներառելով բոլոր հասարակական ոլորտների համապատասխան դերակատարներին (բիզնես, հասարակական կազմակերպություններ, կրթական և ուսումնական շահառուներ, սպառող–կազմակերպություններ և այլն) պարզելու համար նպաստավոր պայմանները,

հաջողության գործոնները, ռիսկային խմբերի մարդկանց կողմից թվային հմտությունների ձեռքբերման խոչընդոտները,
ապագա սցենարների կանխատեսում, երաշխավորագրերի և գործառնական ուղեցույցների մշակում, այն մասին, թե ինչ կարող է անել կրթությունը լուծելու համար այդ թվային բաժանումը դուրս մնացած անհատներին նորից ներգրավելու նպատակով:

4. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 4 – ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Քաղաքականության համատեքստ

«Արդյունքների տարածում և կիրառում» Հիմնական գործունեությունն ազդում է թե՛ քաղաքականություն ստեղծողների, թե՛ իրականացնողների վրա: Անհրաժեշտ է ապահովել առավելագույն արդյունք ԵՄ կողմից ֆինանսավորվող նախագծերից և գործունեությունից, որոնց աջակցում է նոր EU 2020 ռազմավարությունը և Կրթության և ուսուցման 2010թ աշխատանքային ծրագրի, ինչպես նաև կրթության և ուսուցման եվրոպական նոր համագործակցության ռազմավարական շրջանակի (ET 2020)[76] տարածումը:

Այս փաստաթղթում համաձայնեցված է, որ «1(բ) կրթության և ուսուցման մասին եվրոպական համագործակցությունը պետք է լինի համապատասխան և կոնկրետ: Այն պետք է հստակ և տեսանելի արդյունքներ ունենա, որոնք պետք է ներկայացվեն, ստուգվեն և տարածվեն պարբերաբար և համակարգված կերպով…» և «2(գ) արդյունքների տարածում՝ ազգային և եվրոպական մակարդակով տեսանելիությունը և ազդեցությունը ավելացնելու համար: Համագործակցության արդյունքները լայնորեն կտարածվեն համապատասխան բոլոր շահառուների միջև և կքննարկվեն ղեկավարության և նախարարների մակարդակով»:

Տեղական, սեկտորային, տարածաշրջանային, ազգային և եվրոպական մակարդակներում արդյունքների արդյունավետ օգտագործման շրջանակի ստեղծման աջակցությունը Հիմնական գործունեություն 4-ի գլխավոր նպատակն է հանդիսանում:
Այս հիմնական գործունեության կողմից ֆինանսավորված գործողությունները լրացնում են սեկտորային ծրագրերի և այլ հիմնական գործունեությունների առանձնահատուկ արդյունքների տարածման և օգտագործման գործողություններին:

[76] Ibid 6

Նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք ցկյանս ուսումնառության սեկտորներին երկու կամ ավելի ինտեգրված մոտեցում են առաջարկում, ներառում են առանցքային որոշում կայացնողներին և նշանակալի ազդեցության ներուժ են ցուցաբերում սեկտորային տարածաշրջանային, ազգային կամ եվրոպական մակարդակով: Հզոր տեղեկատվական և հաղորդակցական ներուժի տարածումը նույնպես առավելություն կունենա:

Հիմնական գործունեություն 4-ի գործողությունների գերակայություններ

4.1 Բազմակողմանի նախագծեր

Նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք ուշադրությունը սևեռում են հետևյալի վրա

4.1.1 Արդյունքների արդյունավետ տարածման և օգտագործման խաչընդոտների ուսումնասիրում և բացահայտում: Դրանց համար կայուն մոդելների մշակում

Շատ անհրաժեշտ է արդյունքների տարածման և օգտագործման նոր մոդելներ գտնել: Այդ նոր մոդելները և մեթոդները ոչ թե պետք է միայն տարածեն տեղեկատվույթունը, այլ ակտիվ դեր ունենան դրանց շահագործման հարցում: Նախագծերը պետք է կենտրոնանան արդյունքների շահագործման հեշտացման համար անհրաժեշտ համապատասխան ենթակառուցվածքների (վերլուծություն, մեխանիզմներ, մեթոդաբանություններ և պրակրիկ գործիքներ) վրա:

4.1.2 Արդյունքների տարածման ու շահագործման գործողությունների ազդեցությունը

Նախագծերը պետք է գնահատեն շահագործման գործողությունների ազդեցությունը Ցկյասն ուսումնառության ծրագրի ողջ ընթացքում: Պետք է բացահայտեն և կիրառեն գործնական մոդելներ, դրա արդյունքների ազդեցության գնահատման, տարածման և օգտագործման գործողությունների համար:

4.1.3 Արդյունքների փոխանցում և օգտագործում (բազմացում) և դասակարգում ըստ սկզբունքների

Հիմնական գործունեություն 4-ի նպատակներից մեկը նախագծի արդյունքների և որոշում կայացնողների միջև կապող օղակ հանդիսանալն է: Այդ պատճառով նախագծերը պետք է ուշադրություն դարձնեն ՑՈւԾ-ի արդյունքները որոշում կայացնողներին արդյունավետ փոխանցելու ծրագրված գործընթացի վրա տեղական, տարածաշրջանային, ազգային և եվրոպական մակարդակներում: հետագայում նրանք պետք է բազմացնեն լավ գործելակերպերը և դրանք փոխանցեն նոր օգտագործողներին, որոնք դրանից կշահեն: Նախագծերը բազմացման միջոցով պետք է համոզեն անհատ սպառողներին ընդունել ծրագրերի և նախաձեռնությունների արդյունքների ծրագրված գործընթացը:

ԳԼՈՒԽ 3 – ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳԻՐ

Ժան Մոնե ծրագրի առանձնահատուկ և գործառնական նպատակները

Ժան Մոնե ծրագրի հատուկ նպատակները, ինչպես նշված է ծրագրի Որոշման Հոդված 35.1-ում, հետևյալն են

(ա) խթանել ուսուցման և հետազոտման գործունեությունները եվրոպական ինտեգրումն ուսումնասիրություններում

(բ) աջակցել այն հաստատությունների և ասոցիացիաների գոյությանը, որոնք կենտրոնացած են եվրոպական ինտեգրման և եվրոպական հեռանկարներով կրթության և ուսուցման հարցերի վրա:

Ժան Մոնե ծրագրի գործառնական նպատակները, ինչպես նշված է ծրագրի Որոշման Հոդված 35.2-ում, հետևյալն են

(ա) խթանել եվրոպական ինտեգրման ուսումնասիրության դասավանդման, հետազոտման և արտահայտման բարձր առաջադիմությունը Համայնքների սահմաններից ներս և դուրս գտնվող բուհերում

(բ) բարձրացնել եվրոպական ինտեգրման մասին գիտելիքներն ու տեղեկացվածության աստիճանը մասնագետ գիտնականների և ընդհանրապես եվրոպական քաղաքացիների շրջանում

(գ) աջակցել եվրոպական այն հաստատություններին, որոնք զբաղվում են եվրոպական ինտեգրմանն առնչվող հարցերով

(դ) աջակցել բարձրորակ եվրոպական հաստատություններին և ասոցիացիաներին, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում կրթության և ուսմանբնագավառում:

ԺԱՆ ՄՈՆԵ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ (ԺԱՆ ՄՈՆԵ ՄՈԴՈՒԼՆԵՐ, ԺԱՆ ՄՈՆԵ ԱՄԲԻՈՆՆԵՐ և ԺԱՆ ՄՈՆԵ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ)

Ժան Մոնե ծրագրի նպատակն է բուհերի մակարդակով (ԵՄ ներս և դուրս) խթանել դասավանդումը, հետազոտումը և արտացոլումը եվրոպական ինտեգրման ուսումնասիրության ոլորտում: Նպատակն է գիտնականներին, ուսանողներին և աշխարհի քաղաքացիներին ապահովել եվրոպական ինտեգրմանն առնչվող հարցերի մասին գիտելիքներով և տեղեկացվածությամբ:

Նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք

բաց են բուհերի ուսանողների համար (օրինակ՝ նույն քաղաքում կամ տարածաշրջանում) և այն ուսանողների համար, որոնք անմիջական առնչություն չունեն եվրոպական ինտեգրման ուսումնասիրություններին (այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գիտությունը, ինժեներությունը, բժշկությունը, կրթությունը, արվեստը, լեզուները և այլն)

նպաստում են ցկյանս ուսումնառության ծրագրին (ներառյալ մեծահասակների կրթությունը) և բաց են քաղաքացիական խմբերի մասնակցության համար (ինչպիսիք են տարրական և միջնակարգ դպրոցների ուսուցիչները, լրագրողները, մասնագիտական կազմակերպությունների ներկայացուցիչները):

2. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՅԼ ՆԱԽԱԳԾԵՐ (ԺԱՆ ՄՈՆԵ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ)

Նախապատվությունը կտրվի այն նախագծերին, որոնք

ներառում են ակադեմիական գործունեություններ, որոնք մշակում են բազմաճյուղ ռեսուրսներ

ցուցադրում են այն հանգամանքը, որ բաց են քաղաքացիական հասարակության համար

ներառում են թեկնածուական պատրաստող հետազոտողներ կամ ավելի քիչ, քան 5 տարի հետթեկնածուական փորձառություն ունեցողներ

Ներառում են համատեղ միջազգային գործունեություններ և կառուցվածքային կապերի ստեղծում այլ երկրների ուսումնական հաստատությունների հետ, որոնք նպատակաուղղված են այնպիսի հետազոտական աշխատանքների իրականացմանը, որոնք չեն կարող ստացվել երկրի սահմանների ներսում կատարված հետազոտությունների միջոցով (այս գերակայությունը վերաբերում է միայն Տեղեկատվական և հետազոտական գործունեությանը և Բազմակողմանի հետազոտական խմբերին):